British Embassy Yerevan

UNDP

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

oxYGen

UKaid from the British people

WOMEN IN POLITICS
ԿԱՆԱՅՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ՝ ԿԱՆԱՆՑ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ ՆՐԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԵՐԸ» ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՕքսեՋեն հիմնադրամ
2021 թ.

Հետազոտությունն իրականացվել է ՕքսԵՋեն հիմնադրամի կողմից «Կանայք քաղաքականության մեջ» Ծրագրի շրջանակներում ԱՐԳՈՒՄԵՆՏ խորհրդատվական բյուրոյի կողմից: Ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՕքսԵՋեն հիմնադրամի հետ համագործակցությամբ, Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» աջակցությամբ:

Հետազոտությունը պատրաստվել է ՄԹ կառավարության ֆինանսական աջակցությամբ, այնուհանդերձ արտահայտված տեսակետները հեղինակներինն են և պարտադիր չէ, որ համընկնեն ՄԹ կառավարության պաշտոնական դիրքորոշման հետ: Հետազոտությունում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ համընկնեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի տեսակետների հետ:

Բովանդակություն

1 ԱՄՓՈՓԱԳԻՐ 6

2 ՆԱԽԱԲԱՆ 8

2.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 8

2.1.1 ՔանակականՀետազոտություն 9

2.1.2 Որակական հետազոտություն 11

2.2 ՀԵՏԱԶՈՏՎԱԾՀԱՆՐՈՒԹՅԱՆՆԿԱՐԱԳԻՐԸ 12

3 ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 15

3.1 ՏԻՄ ԿԱՆԱՅՔ. ԿԱՆԱՅՔ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԵՎ ԱՎԱԳԱՆՈՒԱՆԴԱՄ 15

3.1.1 Հանրային ընկալումները համայնքի կին ղեկավարի մասին 15

3.1.2 Հանրային ընկալումներն ավագանու կին անդամի մասին 16

3.1.3 Կին թեկնածուին ընտրելու բնութագրիչները 19

3.2 ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ ՏԻՄ-ԵՐՈՒՄ. ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ 22

3.2.1 ՏԻՄ-երում կանանց ներգրավվածության ընդլայնման խոչընդոտները 22

3.2.2 Պաշտոններ, որոնցում հանրությունը տեսնում է կանանց 23

3.2.3 ՏԻՄ-երում կանանց ներգրավվածության արդյունքում տեղի ունեցող փոփոխությունները 25

3.3 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԴԵՐԵՐԸ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ԿԱՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 26

3.4 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՄ-ԵՐՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՎՐԱ 30

3.4.1 Համայնքում որոշումների կայացման մակարդակումկանանց ներգրավվածության աստիճանի փոփոխությունը 32

3.5 ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ 33

3.6 ԿԱՆԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ ՏԻՄ-ՈՒՄ ՈՐԵՎԷ ԸՆՏՐՈՎԻ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ 34

3.7 ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԿԱՐԾԻՔԸ ՏԻՄ-ՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 35

3.8 ՊԱՏԵՐԱԶՄԸ, ՀԱՄԱՎԱՐԱԿԸ ԵՎ ԿԱՆԱՅՔ 37

4 ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 40

4.1 ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ 40

4.2 ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆԸ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 41

4.3 ՏԻՄ-ԵՐՈՒՄ ԿԱՆԱՆՑ ԱՋԱԿՑՄԱՆ, ՃԱՆԱՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 43

4.4 ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 43

4.5 ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎՆԵՐ 44

4.6 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԶԳԱՅՈՒՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆԸ, ՍԵՔՍԻԶՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆԸ, ՄԵԴԻԱՅԻ ԶԳԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ, ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 45

4.7 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՄ ԿԱՆԱՆՑՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԸՍՏ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ՏԻՄ ԿԱՆԱՆՑ 46

4.8 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 47

Աղյուսակներ

Աղյուսակ 1 - Հետազոտության ընտրանքի բաշխումը ... 9
Աղյուսակ 2 - Ընտրանքի բաշխումն ըստ գյուղական բնակավայրերի ... 9
Աղյուսակ 3 - Ընտրանքի բաշխումն ըստ մարզերի քաղաքային բնակավայրերի ... 9
Աղյուսակ 4 - Ընտրանքի բաշխումն ըստ Երևանի համայնքների ... 10
Աղյուսակ 5 - Հետազոտության ընդհանուր պատկերը՝ ըստ հարցազրույցների կայացած և չկայացած արդյունքների ... 10
Աղյուսակ 6 - ԽՀ մասնակիցներ ... 11
Աղյուսակ 7 - Համայնքի կին ղեկավարի կողմից պարտականությունների կատարումը(բնակիչներ) ... 15
Աղյուսակ 9 - Համայնքի կին ղեկավարի կողմից պարտականությունների կատարման գնահատումն ըստ բնակավայրի տիպի (բնակիչներ) ... 15
Աղյուսակ 10 - Ավագանու կին անդամի կողմից պարտականությունների կատարումը(բնակիչներ, ԾԹԲ, ԾՇ) ... 17
Աղյուսակ 11 - Ավագանու կին անդամի կողմից պարտականությունների կատարման գնահատումն ըստ սեռերի(բնակիչներ) 17
Աղյուսակ 13 - Կանայք քանի տոկոս պետք է կազմեն ավագանիում ըստ հանրային ընկալման ... 18
Աղյուսակ 14 - Որ տարիքի կանայք պետք է ավելի շատ ներգրավված լինեն ՏԻՄ-ում(բնակիչներ, ԾԹԲ, ԾՇ) ... 19
Աղյուսակ 15 - Հարցվողներ, որոնք ընտրությունների ժամանակ քվեարկել են կին թեկնածուի օգտին(բնակիչներ, ԾԹԲ, ԾՇ) 19
Աղյուսակ 16 - Բնութագրիչներ, որոնք կարևորվել են կին թեկնածուին ընտրելիս(բնակիչներ, ԾԹԲ, ԾՇ) ... 20
Աղյուսակ 17 - Բնութագրիչներ, որոնք կարևորվել կին թեկնածուին ընտրելիս՝ ըստ հարցվողների սեռի(բնակիչներ) ... 20
Աղյուսակ 18 - Բնութագրիչներ, որոնք կարևորվել կին թեկնածուին ընտրելիս՝ ըստ բնակավայրի տիպի(բնակիչներ) ... 20
Աղյուսակ 20 - Պատճառներ, որոնք խանգարում են կանանց դառնալ համայնքի ղեկավար կամ ավագանու անդամ(բնակիչներ) ... 22
Աղյուսակ 21 - Պատճառներ, որոնք խանգարում են կանանց դառնալ համայնքի ղեկավար կամ ավագանու անդամ ըստ թիրախային բնակավայրերի, Ծրագրի շահառուների և այն բնակավայրերի, որտեղ կան ավագանու կին անդամներ ... 22
Աղյուսակ 22 - Պաշտոններ, որոնցում հանրությունը տեսնում է կանանց ... 24
Աղյուսակ 23 - Հարցվողների համայնքում բնակվող կանայք, որոնց ցանկանում են տեսնել որևէ պաշտոնում ... 24
Աղյուսակ 25 - Որ ոլորտներում կարող է փոփոխությունների հանգեցնել կանանց ներգրավվածության ընդլայնումը ՏԻՄ-երում(բնակիչներ, ԾԹԲ, ԾՇ) ... 25
Աղյուսակ 26 - Որ ոլորտներում կարող է փոփոխությունների հանգեցնել կանանց ներգրավվածության ընդլայնումը ՏԻՄ-երում ըստ սեռի(բնակիչներ) ... 26
Աղյուսակ 27 - Համայնքապետի կամ ավագանու անդամի պաշտոն զբաղեցնելու դեպքում կնոջ համար կարևոր բնութագիչները(բնակիչներ) ... 27
Աղյուսակ 28 - Համայնքապետի կամ ավագանու անդամի պաշտոն զբաղեցնելու դեպքում տղամարդու համար կարևոր բնութագրիչները(բնակիչներ) ... 27
Աղյուսակ 29 - Համայնքապետի կամ ավագանու անդամի պաշտոն զբաղեցնելու դեպքում կնոջ և տղամարդու համար կարևոր բնութագրիչները ըստ թիրախային բնակավայրերի և Ծրագրի շահառուների ... 27
Աղյուսակ 30 - Համայնքապետ կամ ավագանու անդամ դառնալու դրդապատճառները կնոջ դեպքում(բնակիչներ) ... 28
Աղյուսակ 31 - Համայնքապետ կամ ավագանու անդամ դառնալու դրդապատճառները տղամարդու դեպքում(բնակիչներ) ... 28
Աղյուսակ 32 - Համայնքապետ կամ ավագանու անդամ դառնալու դրդապատճառները կնոջ և տղամարդու դեպքում ըստ թիրախային բնակավայրերի և Ծրագրի շահառուների ... 28
Աղյուսակ 36 - ՏԻՄ-ում որևէ ընտրովի պաշտոն զբաղեցնելու կանանց ցանկությունը ... 34
Աղյուսակ 39 - Պատերազմի և համավարակի բացասական ազդեցությունը որոշումների կայացման մակարդակում կանանց ներկայացվածության վրա ըստ սեռի(բնակիչներ) ... 38
Աղյուսակ 40 - Պատերազմի և համավարակի բացասական ազդեցությունը որոշումների կայացման մակարդակումկանանց ներկայացվածության վրա ըստ տարիքային խմբերի(բնակիչներ) ... 38

Գծապատկերներ

Գծապատկեր 1 - Հարցվողների սեռային կազմի նկարագիրը ... 13
Գծապատկեր 2 - Հարցվողների զբաղվածության նկարագիրը ... 13
Գծապատկեր 3 - Հարցվողների ամուսնական կարգավիճակի նկարագիրը ... 13
Գծապատկեր 4 - Հարցվողների կրթական աստիճանի նկարագիրը ... 13
Գծապատկեր 5 - Հարցվողների տարիքային նկարագիրը ... 13
Գծապատկեր 6 - Հարցվողների հաշմանդամության առկայության նկարագիրը ... 14
Գծապատկեր 7 - Համայնքի ղեկավարների կազմում կանանց թվաքանակը(բնակիչներ) ... 15
Գծապատկեր 8 - Հանրության ցանկությունը, որպեսզի համայնքի կին ղեկավարը շարունակի իր պաշտոնավարումը(բնակիչներ) ... 16
Գծապատկեր 9 - Ավագանու անդամների կազմում կանանց առկայությունը(բնակիչներ) ... 16
Գծապատկեր 10 - Հանրության ցանկությունը, որպեսզի ավագանուկին անդամը շարունակի իր պաշտոնավարումը(բնակիչներ) ... 17
Գծապատկեր 11 - Հանրության ցանկությունը, որպեսզի ավագանու կին անդամը համայնքի կառավարման հարցումիր պաշտոնավարումը ըստ թիրախային բնակավայրերի և Ծրագրի շահառուների ... 18
Գծապատկեր 12 - Հարցվողների քանակը, որոնք համայնքում ընտրությունների դեպքում նախապատվությունը կտան կին կամ տղամարդ թեկնածուի(բնակիչներ) ... 21
Գծապատկեր 13 - Հարցվողների քանակը, որոնք համայնքում ընտրությունների դեպքում նախապատվությունը կտան կին կամ տղամարդ թեկնածուի ըստ թիրախային բնակավայրերի և Ծրագրի շահառուների ... 21

Գծապատկեր 14 - Կնոջ՝ համայնքապետ կամ ավագանու անդամ դառնալու հարցում որոշում կայացնողները(բնակիչներ) ... 29
Գծապատկեր 15 - Կնոջ՝ համայնքապետ կամ ավագանու անդամ դառնալու հարցում որոշում կայացնողներն ըստ թիրախային բնակավայրերի և Ծրագրի շահառուների ... 29
Գծապատկեր 16 - Համայնքների խոշորացումը դրական է ազդել որոշումների կայացման մակարդակումկանանց ներկայացվածության վրա(բնակիչներ) ... 30
Գծապատկեր 17 - Համայնքների խոշորացումը դրական է ազդել որոշումների կայացման մակարդակում կանանց ներկայացվածության վրա ըստ թիրախային համայնքների և Ծրագրի շահառուների ... 30
Գծապատկեր 18 - Համայնքների խոշորացումից հետո կանանց թվի փոփոխությունն ավագանիում(բնակիչներ) ... 31
Գծապատկեր 19 - Համայնքների խոշորացումից հետո կանանց թվի փոփոխությունն ավագանիում ըստ թիրախային բնակավայրերի և Ծրագրի շահառուների ... 31
Գծապատկեր 20 - Վերջին 5 տարիներին համայնքում որոշումների կայացման մակարդակումկանանց ներգրավվածության աստիճանը(բնակիչներ) ... 32
Գծապատկեր 21 - Վերջին 5 տարիներին համայնքում որոշումների կայացման մակարդակումկանանց ներգրավվածության աստիճանն ըստ թիրախային բնակավայրերի և Ծրագրի շահառուների ... 32
Գծապատկեր 22 - Տղամարդկանց ցանկությունը, որպեսզի ՏԻՄ-ում մեծանա կանանց մասնակցությունը(բնակիչներ) ... 36
Գծապատկեր 23 - Տղամարդկանց ցանկությունը, որպեսզի ՏԻՄ-ում մեծանա իրենց ընտանիքի կին անդամների մասնակցությունը(բնակիչներ) ... 36
Գծապատկեր 24 - Պատերազմի և համավարակի բացասական ազդեցությունը՝ ավագանու կին անդամների պարտականությունների իրականացման վրա(բնակիչներ) ... 37
Գծապատկեր 25 - Պատերազմի և համավարակի բացասական ազդեցությունը՝ ավագանու կին անդամների պարտականությունների իրականացման վրա ըստ թիրախային բնակավայրերի և Ծրագրի շահառուների ... 37
Գծապատկեր 26 - Պատերազմի և համավարակի բացասական ազդեցությունը որոշումների կայացման մակարդակումկանանց ներկայացվածության վրա(բնակիչներ) ... 37
Գծապատկեր 27 - Պատերազմի և համավարակի բացասական ազդեցությունը որոշումների կայացման մակարդակումկանանց ներկայացվածության վրա ըստ թիրախային բնակավայրերի և Ծրագրի շահառուների ... 38
Գծապատկեր 28 - Ծրագրի շրջանակներում ստացված գիտելիքների և տեղեկատվության կիրառման հնարավորությունները ... 47

Հապավումներ

ԱԺ	Ազգային ժողով
ԽՀ	Խորին հարցազրույց
ԾԹԲ	Ծրագրի թիրախային բնակավայրեր
ԾՇ	Ծրագրի շահառուներ
ՀԽ	Համայնքներիիխոշորացում
ՏՏ	Տնային տնտեսություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին

1 ԱՄՓՈՓԱԳԻՐ

Այս հաշվետվության մեջ ներկայացվում են **«Տեղական ինքնակառավարման բարեփոխումների համատեքստում՝ կանանց առաջխաղացման և որոշումների կայացմանը նրանց մասնակցության հանրային ընկալումն ու քաղաքականության բացերը»** թեմայով 2021թ. իրականացված հետազոտության արդյունքները:

Հետազոտության համար կիրառվել են 2 հիմնական մեթոդներ՝ **քանակական** և **որակական**: Քանակական հետազոտությունն իրականացվել է Հայաստանի բոլոր մարզերում և Երևանում՝ 1,100 բնակչի շրջանում, Ծրագրի թիրախային 5 բնակավայրերի(այսուհետ՝ ԾԹԲ) 100 հարցվողի շրջանում, և Ծրագրի 100 շահառուների(այսուհետ՝ ԾՇ)շրջանում: Որակական հետազոտության շրջանակում իրականացվել են ֆոկուս խմբային քննարկումներ (այսուհետ՝ ՖԽՔ) և խորին հարցազրույցներ (այսուհետ՝ ԽՀ)՝ շահառուների և փորձագետների շրջանում:

Ստորև ամփոփ ներկայացված են քանակական և որակական հետազոտության արդյունքները.

Քանակական հետազոտության արդյունքները

Դրական միտումներ

- Աճել է կին համայնքի ղեկավարի կողմից իր պարտականությունները կատարելուն վերաբերվող գնահատականի ցուցանիշը (+7%):
- Գյուղական բնակավայրերում ավելի բարձր են գնահատում համայնքի կին ղեկավարների գործունեությունը, քան քաղաքայինները:
- Ծրագրի թիրախայկին բնակավայրերը հարցվողների 99% և Ծրագրի շահառուների 97%-ը ցանկանում է, որ ավագանու կին անդամը շարունակի իր պաշտոնավարումը:
- 2 տարիների ընթացքում հանրության վստահության ցուցանիշը 40-62 տարիքային խմբի կանանց ՏԻՄ–երում աճել է:
- Ծրագրի թիրախայկին բնակավայրերը հարցվողների և Ծրագրի շահառուների ՏԻՄ և ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ավելի շատ են նախապատվություն տվել կանանց:
- Ծրագրի թիրախայկին բնակավայրերը 74%-ի, իսկ Ծրագրի շահառուների 65%-ի կարծիքով կանայք ավագանիում պետք է կազմեն ուղիղ կեսը (50%):
- 2019 թվականի համեմատ բնակավայրերում, որտեղ կան ավագանու կին անդամներ, կնոջը որևէ պաշտոնում տեսնելու հարցում հանրային ընկալումները փոխվել են դրական: Այդ բնակավայրերի հանրությունն ավելի շատ է տեսնում կնոջը որևէ ղեկավար պաշտոնում:
- Իրենց համայնքում բնակվող որևէ կնոջ ավագանու պաշտոնում տեսնելու ցուցանիշները տարբեր են ըստ ընդհանուր հարցվածների և ըստ Ծրագրի մասնակիցների: 2019 թվականի համեմատ 2021թ. տվյալներով ընդհանուր հարցվածների 35%-ն է իրենց համայնքում բնակվող որևէ կնոջ տեսնում ավագանու անդամի պաշտոնում, իսկ ծրագրի թիրախային բնակավայրերում՝ 86% և ծրագրի շահառուների 89%-ը:
- Աճել է կնոջ համայնքի ղեկավար կամ ավագանու անդամ դառնալու մասին ինքնուրույն որոշում կայացնելու հնարավորության մասին ցուցանիշը, հատկապես երիտասարների շրջանում:
- Վերջին 2 տարիներին բարձրացել է հանրության քաղաքացիական ակտիվությունը: Հանրությունն այժմ ավելի պատրաստ է մասնակցելու միջոցառումների, որոնք ուղղված են կանանց դերի բարձրացմանը համայնքում (1% ցուցանիշի աճ), ինչպես նաև ավելի վստահ է, որ կարող է նպաստել, որպեսզի համայնքում մեծանա կանանց ներգրավվածության աստիճանը համայնքի կառավարման հարցերում (4% ցուցանիշի աճ):
- Կանանց ընկալումներում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնք կարող են լինել այն հիմքը, որի վրա պետք է իրականացվեն կանանց քաղաքական ակտիվությունը բարձրացնող հետագա գործողությունները: Այդ թվում՝ կանայք գնալով ավելի քիչ են մտածում, որ ՏԻՄ-ում պաշտոն զբաղեցնելը համատեղելի չէ ընտանիքի հետ (-4%): Մյուս կողմից, կանայք ավելի քիչ են կարևորում ծանոթություններ, կապեր և ֆինանսական միջոցներ ունենալու հանգամանքները՝ գոնե ՏԻՄ-ում

պաշտոն զբաղեցնելու հարցում (-4%): Չնչին փոփոխությամբ, սակայն կանանց ընկալումներում փոխվել են նաև այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են՝ ՏԻՄ-ում պաշտոն զբաղեցնելը կնոջը ոչ հարիր աշխատանք համարելը (-1%) և ընտանիքի անդամի արգելքը (-1%):

Բացասական միտումներ

- Համայնքների խոշորացումից հետո կանանց թիվն ավագանիներում նվազել է:
- 12%-ով իջել է հանրության՝ որպես համայնքի ղեկավար կամ ավագանու անդամ առաջադրվելու ցանկությունը, ինչը պայմանավորված է նաև այդ տեսակի աշխատանքի դիմաց վարձատրության բացակայությամբ:
- Հանրության 54%-ը կարծում է, որ համավարակն ու պատերազմը բացասական ազդեցություն են ունեցել որոշումների կայացման մակարդակում կանանց ներկայացվածության վրա: Այս կարծիքի կրողը, հատկապես կանայք են:

Որակական հետազոտության արդյունքները

- ՀՀ ընտրական օրենսգրքում գենդերային քվոտայի ամրագրումը՝ ՏԻՄ համամասնական ընտրություններում կանանց ու տղամարդկանց ներկայացվածությունը տեղական իշխանությունում հավասարակշռելու նպատակով փորձագիտական շրջանակներում դրական է գնահատվում:
- Համայնքային բյուջեների մշակման գործընթացում գենդերային բյուջետավորման մեխանիզմի ներդրումը հանգեցնելու է դրական տեղաշարժերի, քաղաքացիների կարիքներին համապատասխան բյուջեի ձևավորման:
- Կանանց հաջողությունների պատմությունները ներկայացնելը արժեքավոր է երկու տեսանկյունից՝ ոգեշնչող են երիտասարդների համար, և նպաստում են ՏԻՄ կանանց՝ իրենց ավելի արժևորված և գնահատված զգալուն:
- «20-րդ դարի ականավոր հայ կանայք. ճանաչիր քո պատմությունը» խորագրով ցուցահանդեսը հնարավորություն է տվել ազգաբնակչությանը ցույց տալ, որ գենդերային հավասարության հարցը կամ կանանց հավասարության հարցը ներկրված գաղափար չէ, այլ մի գաղափար է, որը 19-րդ դարի կեսերից արդեն իսկ բարձրաձայնվել է Հայաստանում:
- Ծրագրի շահառուների կողմից ծրագրի արդյունավետության միջին գնահատականը 4. 82 է (5 բալային համակարգից):
- Շահառուների գործունեության վրա Ծրագրի ունեցած ազդեցության միջին գնահատականը 4. 48 է (5 բալային համակարգից):
- Գենդերային հիմնահարցերի վերաբերյալ Ծրագրի մասնակիցների ընկալումների փոփոխության միջին գնահատականը կազմում է 4. 44 (5 բալային համակարգից):
- Շահառու մասնակիցների 98%-ը որևէ չափով կիրառել է Ծրագրի շրջանակներում իր ձեռք բերած գիտելիքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.

2020 թվականն աննախադեպ ծանր տարի էր Հայաստանի համար, երբ փոփոխության ենթարկվեցին մի շարք հասարակական պատկերացումներ և ոչ միայն կանանց քաղաքական մասնակցության այլև շատ և շատ այլ հարցերի վերաբերյալ: Այնուամենայնիվ, հետազոտության արդյունքները գալիս են ապացուցելու, որ եթե ոչ ողջ երկրում, այլ ծրագրի թիրախային համայնքներում դրականորեն են փոխվել հասարակական ընկալումները կանանց քաղաքական մասնակցության և համայնքային կյանքի վերաբերյալ, ինչն իր հերթին պետք է դիտարկվի որպես ծրագրի դրական արդյունք:

2 ՆԱԽԱԲԱՆ

«Տեղական ինքնակառավարման բարեփոխումների համատեքստում՝ կանանց առաջխաղացման և որոշումների կայացմանը նրանց մասնակցության հանրային ընկալումն ու քաղաքականության բացերը» թեմայով հանրային հարցումներն իրականացվել են **«Կանայք քաղաքականության մեջ» ծրագրի շրջանակներում**: Պատվիրատուն **Օքսեջեն Հիմնադրամն** է (Պատվիրատու), իրականացնողը՝ **Արգումենտ Խորհրդատվական Բյուրոն**(Խորհրդատու): Հանրային հարցումներն իրականացվել են 2021թ.-ի մայիս-հունիս ամիսներին:

«Կանայք քաղաքականության մեջ» Ծրագիրն իրականացվում է Օքսեջեն Հիմնադրամի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից համատեղ՝ համագործակցելով ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ՝ նպատակ հետապնդելով հզորացնել կանանց Տեղական ինքնակառավարման մարմիններում (այսուհետ՝ ՏԻՄ):

Ծրագրի հիմնական նպատակն է՝ նպաստել կանանց քաղաքական մասնակցության մեծացմանը՝ երիտասարդ կանանց ներգրավվելով համայնքային զարգացման գործընթացներին:

Սույն հետազոտության 1-ին փուլն իրականացվել է 2019թ: 2021թ. -ին իրականացվել է երկրորդ հետազոտությունը՝ համեմատելու համար, թե Ծրագրի արդյունքում ինչ փոփոխություններ են տեղի ունեցել հանրային ընկալումներում: Այս հաշվետվության մեջ ներկայացվում են 2019-2021 թվերին իրականացված հետազոտության արդյունքները՝ զուգահեռ:

2.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության համար կիրառվել են 2 հիմնական մեթոդներ՝ **քանակական** և **որակական**: Քանակական հետազոտությունն իրականացվել է հանրության շրջանում, Ծրագրի թիրախային բնակավայրերում և Ծրագրի շահառուների շրջանում: Որակական հետազոտության շրջանակներում իրականացվել են ԽՀ-ներ և ՖԽՔ-ներ:

Հետազոտության շրջանակներում հանրային ընկալումների ուսումնասիրությունն իրականացվել և հաշվետվությունում ներկայացվել էմի քանի մակարդակներով՝

1) բնակիչներ, որի ներքո նկատի ունենք հետազոտության այն մասնակիցներին, որոնք Ծրագրի կողմից հստակ թիրախավորված չեն եղել և Ծրագրի անմիջական շահառուն չեն հանդիսանում(1,100 հոգի),
2) Ծրագրի թիրախայինբնակավայրեր, որտեղ Ծրագրի շրջանակներում իրականացվել են տարբեր միջոցառումներ(100 հոգի),
3) Ծրագրի շահառուներ, որոնք մասնակցել ենԾրագրի շրջանակներում կազմակերպված միջոցառումների, հանդիպումների և քննարկումների(100 հոգի),
4) Բնակավայրեր, որտեղ կան ավագանու կին անդամներ(223 հոգի): Այս խումբն առանձնացվել է բնակիչներից:

Բնակիչների շրջանում իրականացված հետազոտությունը, ինչպես արդեն նշվել է, իրականացվել է երկու անգամ՝ 2019թ. և 2021թ. : ԾԹԲ-ների և ԾԾ-ների շրջանում հետազոտությունն իրականացվել է միայն 2021թ. -ին:

Նման բազմաշերտ դիտարկումը թույլ կտա առավել ճշգրիտ հասկանալ հանրային տարբեր շերտերի ընկալումները, դրանք պայմանավորող գործոնները, ինչպես նաև՝ Ծրագրի ունեցած ազդեցությունը հստակ ուղղորդված թիրախային խմբերի ընկալումների վրա:

Նախքան հետազոտության արդյունքներին անցնելը՝ նշենք, որ դրանց պետք է մոտենալ որոշակի վերապահմամբ՝ հաշվի առնելով վերջին շրջանում Հայաստանում տեղի ունեցած երկու շատ կարևոր իրադարձությունները՝ համավարակը և պատերազմը: Այդ իրադարձությունները պայմանավորել են հանրության կողմից առաջնահերթ այլ խնդիրների կարևորումը՝ երկրորդային հարթություն մղելով մի շարք հարցեր:

2.1.1 ՔանակականՀետազոտություն

Հետազոտությանիրականացման ընտրանքի չափի որոշման համար հիմք են հանդիսացել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալները: Վերոնշյալ տվյալների հիման վրա քանակական հետազոտությունն իրականացվել է 1,100 ռեսպոնդենտների շրջանում՝ Հայաստանի բոլոր մարզերում և Երևանում՝ հետևյալ բաշխմամբ.

Աղյուսակ 1 - Հետազոտության ընտրանքի բաշխումը

Մարզեր	Գյուղ	Քաղաք	Ընդամենը
Երևան	-	399	**399**
Արարատ	69	27	**96**
Արմավիր	67	31	**98**
Արագածոտն	37	10	**47**
Գեղարքունիք	60	25	**85**
Լոռի	33	48	**81**
Կոտայք	42	51	**93**
Շիրակ	36	51	**87**
Սյունիք	17	35	**52**
ՎայոցՁոր	12	6	**18**
Տավուշ	25	19	**44**
Ընդամենը	**398**	**702**	**1,100**

Ընդհանուր առմամբ, հետազոտության ընտրանքի 36%-ն (399) իրականացել է Երևանում, 64%-ը (701)՝ մարզերում:

Գյուղական բնակավայրերի ընտրության պարագայում կարևորվել է վերջիններիս հեռավորությունը մարզկենտրոններից, այդ թվում՝ առանձնացվել են 3 գոտիներ՝ 1) մարզկենտրոնին մոտ հեռավորության վրա գտնվող բնակավայրեր, 2) մարզկենտրոնից միջին հեռավորության վրա գտնվող բնակավայրեր,3) մարզկենտրոնից հեռուհեռավորության վրա գտնվող բնակավայրեր: Յուրաքանչյուր գոտուց ընտրվել է 1 բնակավայր, որոնք ներկայացված են ստորև.

Աղյուսակ 2 - Ընտրանքի բաշխումն ըստ գյուղական բնակավայրերի

Մարզեր	Գոտի 1	Ք	Գոտի 2	Ք	Գոտի 3	Ք
Արարատ	ՎերինԴվին	23	Վանաշեն	23	Զանգակատուն	23
Արմավիր	Առատաշեն	23	Ալաշկերտ	22	Մյասնիկյան	22
Արագածոտն	Սասունիկ	12	Շենավան	12	Աշնակ	13
Գեղարքունիք	Գանձակ	20	Վաղաշեն	20	ՄեծՄասրիկ	20
Լոռի	Դարպաս	11	Ագարակ	11	Մեծավան	11
Կոտայք	Մեղրաձոր	14	ՆորԵրզնկա	14	Գեղաշեն	14
Շիրակ	Հայկավան, Ոսկեհասկ	12	Քարաբերդ, Ձիթհանքով	12	Ամասիա	12
Սյունիք	Սյունիք	6	Քարահունջ	5	Սառնակունք	6
ՎայոցՁոր	Գետափ	4	Ձառիթափ	4	Սարավան	4
Տավուշ	Գետահովիտ	9	Թեղուտ	8	Ծաղկավան	8

* Շիրակի մարզում երկուական համայնքների ընտրության պատճառը կայանում է նրանում, որ ի սկզբանե ընտրված Քարաբերդ և Հայկավան բնակավայրերում 3 քայլի կիրառմամբ անհնարին է եղել ապահովել անհրաժեշտ քանակի հարցումներ: Այդ իսկ պատճառով, այդ քանակները լրացվել են նույն չափորոշիչներով այլ համայնքներում, տվյալ պարագայում, համապատասխանաբար՝ Ձիթհանքով և Ոսկեհասկ բնակավայրերում:

Մարզային քաղաքները երկու տիպի են՝ մարզկենտրոններ և մարզկենտրոններին մոտ և հեռու տեղակայված քաղաքներ:

Աղյուսակ 3 - Ընտրանքի բաշխումն ըստ մարզերի քաղաքային բնակավայրերի

Մարզեր	Քաղաքներ	Քանակ	Քաղաքներ	Քանակ
Արարատ	Արտաշատ	14	Վեդի	13
Արմավիր	Էջմիածին	16	Արմավիր	15
Արագածոտն	Աշտարակ	5	Թալին	5
Գեղարքունիք	Գավառ	13	Վարդենիս	12
Լոռի	Վանաձոր	24	Տաշիր	24
Կոտայք	Հրազդան	26	Աբովյան	25
Շիրակ	Գյումրի	26	Մարալիկ	25
Սյունիք	Կապան	18	Սիսիան	17

ՎայոցՁոր	Եղեգնաձոր	3	Վայք	3
Տավուշ	Իջևան	10	Դիլիջան	9

Երևանումհետազոտությունն իրականացվել է 12 համայնքներում՝ հետևյալ բաշխմամբ.

Աղյուսակ 4 - Ընտրանքի բաշխումն ըստ Երևանի համայնքների

Համայնքներ	Քանակ
Աջափնյակ	40
Ավան	20
Արաբկիր	43
Դավթաշեն	16
Էրեբունի	47
Մալաթիա-Սեբաստիա	51
Նոր -Նորք	49
Նորք-Մարաշ	4
Նուբարաշեն	4
Շենգավիթ	52
Քանաքեռ-Զեյթուն	27
Կենտրոն	46
Ընդամենը	**399**

Ռեսպոնդենտի ընտրություն:Նախքան ռեսպոնդենտի ընտրությունը՝ բնակավայրերում իրականացվել են փողոցների և տնային տնտեսությունների (այսուհետ՝ SS) ընտրություն.

- *Փողոցի ընտրություն*: Բնակավայրերում ընտրվել են երկուական գլխավոր և երկրորդական փողոցներ: Այնուհետ, յուրաքանչյուր փողոցի սկզբնամասից ընտրվել է սկզբնակետը, որը համարվել է հետազոտության առաջին թիրախային կետը՝ հետագա քայլերն իրականացնելու համար:
- *SS ընտրություն*: Այն իրականացվել է 3 քայլի սկզբունքով: Այսինքն, առաջին SS ընտրելուց հետո բաց են թողնվել հաջորդ երկու SS-ները և կապ է հաստատվել երրորդ SS-ի հետ:
- *Ռեսպոնդենտի ընտրություն*: Այն իրականացվել է «վերջին ծննդի» սկզբունքով: Նախ, հարցազրուցավարների կողմից գրի են առնվել SS բոլոր չափահաս անդամների անունները և ծննդյան տվյալները՝ օր, ամիս, տարի: Որից հետո հարցազրույցն իրականացվել է SS այն անդամի հետ, ում ծննդյան օրն արդեն անցել է և ամենամոտն է հարցազրույցի իրականացման օրվան:

Եթե ընտրված ռեսպոնդենտը տվյալ պահին անհասանելի է, ապա վերջինիս հետ կապ հաստատելու նպատակով տվյալ SS հետայց է իրականացվել և 2անգամ: Եվ միայն 3 այցերից հետո տվյալ ռեսպոնդենտը համարվել է անհասանելի և անցում է կատարվել հաջորդ քայլին: Այս և հարցազրույցի չկայացման մյուս պատճառների վիճակագրությունը ներկայացված է **Աղյուսակ 5-**ում.

Աղյուսակ 5 - Հետազոտության ընդհանուր պատկերը՝ ըստ հարցազրույցների կայացած և չկայացած արդյունքների

Ընդհանուր կոնտակտների թիվը,որից՝	Ք	%
	11,283	100%
Կայացած հարցազրույցներ	**1,100**	**10%**
Չկայացած հարցազրույցներ, որից՝	**10,129**	**90%**
- **Դատարկ, չբնակեցվածհասցե**	1,468	13%
- **SS-ի հետկապհաստատելուանհնարինություն**	3,568	32%
- **Մերժում**	3,651	33%
- **Ռեսպոնդենտիանկարողություն**	274	2%
- **Ռեսպոնդենտի անհասանելիություն**	970	9%
- **Օֆիս, դպրոց, խանութ, և այլշինություններ**	126	1%
- **Այլ**	72	0.6%

Չկայացված հարցազրույցների պատճառները, որոնք ներկայացված են աղյուսակում, ունեն հետևյալ մեկնաբանությունները.

1. Դատարկ/չբնակեցված հասցե - սա այն տունը/բնակարանն է, որտեղ տան անդամները մի քանի տարի է այլևս չեն բնակվում: Այդ մասին ճշտում է իրականացվել հարևաններից:

2. SS-ի հետ կապ հաստատելու անհնարինություն - սա այն դեպքն է, երբ տվյալ տարածքում մեր աշխատելու ընթացքումSS անդամները տանը չեն եղել: Մարզային բնակավայրերում դա տվյալ տարածքում աշխատելու օրն է, իսկ Երևանում՝ տվյալ տարածքում աշխատելու օրերը, որը կարող է լինել մի քանի օրից մինչև 1 շաբաթ:
3. Մերժում - սա հանդիպում է երկու դեպքերում.
   - երբ մերժում է դուռը բացած SS անդամը,
   - երբ մերժում է արդեն ընտրված ռեսպոնդենտը
4. Ռեսպոնդենտի անկարողություն - սա հանդիպումէ հետևյալ դեպքերում.
   - երբ ռեսպոնդենտը չի հասկանում հայերեն,
   - երբ ռեսպոնդենտն ունի այնպիսի հաշմանդամություն, որից ելնելով չի կարող պատասխանել հարցերին,
   - երբ ռեսպոնդենտը չի կարող պատասխանել հարցերին՝ ելնելով տարիքից, օրինակ՝ 90 տարեկան է,
   - երբ ռեսպոնդենտն ալկոհոլի ազդեցության տակ է
5. Ռեսպոնդենտի անհասանելիություն - սա հանդիպում է հետևյալ դեպքերում.
   - երբ ռեսպոնդենտը պայմանագրային զինծառայող է և 15 օր տուն չի գալու
   - երբ ռեսպոնդենտը տանը չի լինելու մեր՝ տվյալ տարածքում աշխատելու ընթացքում
   - երբ ռեսպոնդենտը տուն է վերադառնում երեկոյան ժամը 20:30-ից հետո
6. Ոչ բնակելի կառույցներ - երբ մեր քայլով հանդիպում ենք ոչ բնակելի կառույցների, օրինակ՝ դպրոց, օֆիս, մանկապարտեզ, խանութ և այլն:
7. Այլ -վերոնշյալ հիմնական 6 կետերից բացի հանդիպող այլ իրավիճակներ:

Հետազոտության ընթացքում մերժումների մեծ քանակը պայմանավորված է մի քանի հանգամանքներով.
1. Թեմայի վերաբերյալ հասարակության հետաքրքրվածության ցածր մակարդակով
2. Վերջին տարիների սոցիոլոգիական հարցումների մեծ թվաքանակով
3. Հատկապես Երևանում հասարակության զբաղվածության բարձր մակարդակով և դրանով պայմանավորված՝ ազատ ժամանակի կարևորմամբ:

Ծրագրի թիրախային բնակավայրերից քանակական հետազոտությունն իրականացվել է հինգում՝ Դդմաշեն, Դիտակ, Սարիգյուղ, Արտաշատ և Էջմիածին: Վերը թվարկված բնակավայրերն ընտրվել են պատահականության սկզբունքով: Յուրաքանչյուր բնակավայրից հարցազրույց է իրականացվել 20 հարցվողի հետ՝ ընդհանուր առմամբ իրականացնելով 100 հարցազրույց:

Ծրագրի շահառուների հետ հարցազրույցներն իրականացվել են հեռախոսազանգերի միջոցով՝ ելնելով անվտանգության ապահովման նկատառումներից, քանի որ հետազոտության այս փուլը համընկել է համավարակ համավարակի հերթական բարձր թվերով տարածման հետ: Ծրագրի շահառուների հետ իրականացվել է 100 հարցազրույց, որոնց ընտրությունն իրականացվել է պատահականության սկզբունքով:

Տվյալների էլեկտրոնային բազա: Քանի որ հետազոտությունն իրականացվել է JotFormէլեկտրոնային բազայի հիման վրա և մուտքագրման աշխատանքներ չեն եղել՝դաշտային աշխատանքների ավարտից անմիջապես հետո տվյալներն արտածվել են էքսել, որտեղ էլ իրականացվել են տվյալների մաքրման և կոդավորման աշխատանքները: Որից հետո տվյալներն արտածվել են SPSS և կրկին արվել է կոդավորում: Այնուհետև իրականացվել է հարցաշարում առկա բոլոր հարցերի միաչափ տվյալների պատրաստում:

2.1.2 <u>Որակական հետազոտություն</u>

Որակական հետազոտության շրջանակներում կիրառվել ենԽՀ-իև ՖԽՔ մեթոդները:ԽՀ-ներն իրականացվել են4 փորձագետների շրջանում, որոնք ներկայացված են կից աղյուսակում.

Աղյուսակ 6 - ԽՀ մասնակիցներ

Մասնակցի անուն, ազգանունը	Մասնակցի պաշտոնը/զբաղվածությունը
Աշոտ Գիլոյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ
Շաքե Իսայան	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն

ՖԽՔ-ներն իրականացվել են 3 խմբերի հետ, որոնք են

1) *Փորձագետների խումբ*, որի կազմում մասնակցել են՝ Սուրեն Դեհերյան (լրագրող ապագայի համար), Մարիամ Մուղդուսյան («Մուղդուսյան կենտրոն»), Արմինե Մխիթարյան («Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ»), Թամարա Հովնաթանյան («Կանանց տեղեկատվական-վերլուծական ցանց» ՀԿ) և Լիլիթ Զաքարյան (գենդերային հարցերով փորձագետ):
2) *ՏԻՄ կանայք,* որի կազմում մասնակցել են՝ Արմենուհի Առաքելյան(Կոտայքի մարզ, Ծաղկաձորի համայնք), Անգելինա Արշակյան (Արմավիրի մարզ), Սվետլանա Պետրոսյան (Լոռու մարզ, Ալավերդու համայնք), Աննա Հովսեփյան (Արարատի մարզ, Բուրաստան համայնք), Աննա Բեգունց (Արարատի մարզ, Սիս համայնք), Կարինե Ասատրյան (Տավուշի մարզ, Սարիգյուղ համայնք), Շամիրամ Եղիազարյան (Շիրակի մարզ, Արփի համայնք)
3) *Լրագրողներ,* որի կազմում մասնակցել են՝ Լուսինե Հարությունյան (լրագրող), Էվելինա Ղանթարչյան (սպորտային լրագրող), Անի Մկրտչյան (Շիրակի մարզ, «Ասպարեզ» ակումբի լրագրող), Հեղինե Մանուկյան (Սյունիքի մարզ, լրագրող)

Որակական հետազոտության իրականացման տեխնիկան և գործիքակազմը: ԽՀ-ներըև ՖԽՔ-ներն իրականացվել են Պատվիրատուի, Խորհրդատուի և փորձագիտական խմբի կողմից նախօրոք մշակված հարցաշարի ուղեկցությամբ:Հաշվի առնելով երկրում դեռ շարունակվող համավարակի առկայությունը և չվտանգելու համար մասնակիցների առողջությունը՝ ՖԽՔ-ներն անցկացվել են օնլայն հարթակում: ԽՀ-ների հիմնական մասը ևս անցկացվել են օնլայն հարթակում, բացառությամբ 1 հարցազրույցի:

Որակական հետազոտության հարցաշար-ուղեցույցում ներառված են եղել այն բոլոր ծրագրերը, միջոցառումները, գործողությունները, որոնք իրականացվել են Պատվիրատուի կողմից: Հարցաշարը բաղկացած է եղել 8 հիմնական բաժիններից, որոնք են՝

1) «Կանայք քաղաքականության մեջ» ծրագրի շրջանակներում 2019թ.-ին իրականացված Համայնքներում կանանց քաղաքական մասնակցության հանրային ընկալման հետազոտության հիման վրա արված և ներկայացված մի շարք առաջարկություններ, որոնք ընդունվել են ամբողջությամբ կամ մասամբ: Ինչպես նաև ՏԻՄ-երում կանանց քաղաքական մասնակցության խթանմանը և գենդերային կարծրատիպերի հաղթահարմանն ուղղված մոտեցումներ,
2) ՏԻՄ-երում կանանց քաղաքական մասնակցությունը խթանելու նպատակով իրականացված գործողություններ,
3) ՏԻՄ-երում կանանց աջակցման, նրանց ճանաչելիության ու գենդերային կարծրատիպերի հաղթահարմանն ուղղված գործողություններ,
4) ՏԻՄ-երի կանանց ձայնը լսելի դարձնելուն ուղղված նախաձեռնություններ,
5) կանանց քաղաքական մասնակցության խթանմանն ուղղված հանրային քարոզարշավները,
6) Լրագրողների, բլոգերների, փողքասթերների համար նախաձեռնած դասընթացներ, աշխատաժողովներ՝ գենդերային զգայուն լրատվությունը խրախուսելու, սեքսիզմը հաղթահարելու, մեդիայի զգայունությունը կանանց հիմնահարցերի վերաբերյալ բարձրացնելու տեսանկյունից,
7) «Կանայք քաղաքականության մեջ» ծրագրի շրջանակներում մեդիան առավել գենդերային զգայուն դարձնելուն ուղղված նախաձեռնություններ,
8) Կանանց քաղաքական մասնակցությանը վերաբերող միջազգային հանձնառությունների և, մասնավորապես, Կայուն զարգացման նպատակների շրջանակում ստանձնած պարտավորությունների մասին հանրության իրազեկությունը բարձրացնելու նպատակով նյութերի պատրաստում և տարածում

Որակական հետազոտության մասնակիցները գնահատել են, թե որքանով են արված գործողությունները եղել արդյունավետ, և որքանով՝ կիրառելի, ինչ բացթողումներ կան այդ ոլորտներում, որքանով են այդ գործողությունները նպաստում առկա իրավիճակի բարեփոխմանը և որքանով են եղել նպատակային:

2.2 ՀԵՏԱԶՈՏՎԱԾՀԱՆՐՈՒԹՅԱՆՆԿԱՐԱԳԻՐԸ

Հետազոտության շրջանակներում կանանց առավել մեծ թիվ կազմելու հիմքում (**Գծապատկեր 1**) ընկած են մի քանի կարևոր պատճառներ: Նախ, կանայք առավել հակված են մասնակցելու սոցիալ-տնտեսական

հետազոտությունների, քան՝ տղամարդիկ: Մյուս կողմից, տղամարդիկ, ելնելով ունեցած զբաղվածության բնույթից, ավելի ուշ են տուն վերադառնում, ինչը դժվարացնում է նրանց հետ կապ հաստատելը:

Հետազոտության մասնակիցների մեջ գերակշռում են զբաղվածություն ունեցողները (**Գծապատկեր 2**): Զբաղվածության մեջ ներառել ենք նաև սեփական գյուղատնտեսական աշխատանքների մեջ ներգրավված հանրությանը:

Գծապատկեր 1 - Հարցվողների սեռային կազմի նկարագիրը



Գծապատկեր 2 - Հարցվողների զբաղվածության նկարագիրը



Ամուսնական կարգավիճակի առումով գերակշռում են ամուսնացածները (**Գծապատկեր 3**):

Գծապատկեր 3 - Հարցվողների ամուսնական կարգավիճակի նկարագիրը



Գծապատկեր 4 - Հարցվողների կրթական աստիճանի նկարագիրը



Հարցվողների տարիքային նկարագրի դիտարկումը ցույց է տալիս, որքան բարձր է անձի տարիքը, այնքան հակված է մասնակցելու սոցիալական հետազոտությունների (**Գծապատկեր 5**): Մյուս կողմից 63 և բարձր տարիքային խմբի ներկայացուցիչները հիմնականում չունեն որևէ զբաղվածություն (աշխատանք), առավել հասանելի են և առավել բաց են շփումների համար:

Հաշմանդամություն ունենալու գնահատումը թողնվել է պատասխանողի ընկալման վրա: Հարցվողն է որոշել՝ արդյոք հանդիսանում է հաշմանդամություն ունեցող անձ, թե՝ ոչ:

Գծապատկեր 5 - Հարցվողների տարիքային նկարագիրը



Ընդ որում, և՛ 2021, և՛ 2019 թվականի հետազոտությունների ընթացքում հաշմանդամություն ունեցող անձիք կազմել են նույն15%(**Գծապատկեր 6**):

Գծապատկեր 6 - Հարցվողների հաշմանդամության առկայության նկարագիրը



3 ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

3.1 ՏԻՄ ԿԱՆԱՅՔ. ԿԱՆԱՅՔ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԵՎ ԱՎԱԳԱՆՈՒԱՆԴԱՄ

Հետազոտության այս մասում հիմնական շեշտադրումն իրականացվել է ՏԻՄ-երի կին անդամների մասին առկա ընկալումների ուսումնասիրությանը: Ըստ հանրային ընկալումների՝ ինչ հաջողությամբ են իրենց պարտականություններն իրականացնում ավագանու կին անդամները և համայնքի կին ղեկավարները: Որքանով են ՏԻՄ կանայք իրենց գործունեության մեջ զիջում տղամարդկանց, և արդյոք հանրությունը ցանկանում է, որպեսզի նրանք շարունակեն իրենց պաշտոնավարումը և գործունեությունը:

3.1.1 Հանրային ընկալումները համայնքի կին ղեկավարի մասին

Հետազոտության մասնակիցների 6%-ն է նշել, որ իրենց համայնքի ղեկավարը կին է(Գծապատկեր 7)[1]: Այդ թիվը գրեթե նույնն է ինչ 2019թ. –ին, շատ քիչ՝ 0. 5% փոփոխությամբ: Սակայն փոխվել է հանրության ընկալումներըհամայնքի կին ղեկավարի կողմից իր պարտականությունների իրականացման մասով: Ըստ հանրային ընկալումների՝ 2019թ. համեմատ՝ համայնքի կին ղեկավարներն այսօր ավելի լավ են կատարում իրենց պարտականությունները (Աղյուսակ 7):

Գծապատկեր 7 - Համայնքի ղեկավարների կազմում կանանց թվաքանակը(բնակիչներ)



Աղյուսակ 7 - Համայնքի կին ղեկավարի կողմից պարտականությունների կատարումը (բնակիչներ)

Գնահատականներ	2019	2021
Վատ	5%	4%
Միջին	28%	34%
Լավ	52%	59%
Հրաժ. է պատասխ.	1%	0%
Դժվար. է պատասխ.	14%	3%
Ընդամենը	**100%**	**100%**

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ 7% աճել է այն մարդկանց թիվը, որոնք կարծում են որ կանայք լավ են կատարում համայնքի ղեկավարի պարտականությունները հետևաբար նվազեցնելով «վատ» գնահատական տվողների թիվը:

Համայնքի կին ղեկավարների պարտականությունների կատարման մասով գնահատականների տարբերվում են ըստ բնակավայրերի տիպի: Օրինակ. գյուղական բնակավայրերում ավելի բարձր են գնահատում համայնքի կին ղեկավարների գործունեությունը: Գյուղական բնակավայրերի բնակիչների կողմից իրենց համայնքի կին ղեկավարի պարտականությունների կատարմանը տրվող«լավ» գնահատականն աճել է մոտ 3. 5 անգամ:(Աղյուսակ 8):

Աղյուսակ 8 - Համայնքի կին ղեկավարի կողմից պարտականությունների կատարման գնահատումն ըստ բնակավայրի տիպի (բնակիչներ)

Գնահատականներ	2019		2021	
	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք
Վատ	13%	3%	0%	11%
Միջին	33%	26%	40%	25%
Լավ	17%	63%	60%	57%

[1]Այս հարցի շուրջ չեն ներկայացվել ԾԹԲ-ների և ԾԾ-ների կարծիքը, քանի որ թվերը շատ փոքր են և ներկայացուցչական չեն

Չնայած այն հանգամանքին, որ համայնքի կին ղեկավարի կողմից պարտականությունների գնահատման դրական ցուցիչները («լավ», «միջին») վերջին 2 տարիներին բարձրացել է, **դրանով հանդերձ հանրության ցանկությունը, որպեսզի համայնքի կին ղեկավարը շարունակի իր պաշտոնավարումը՝ նվազել է(8%)** (**Գծապատկեր 8**):

Գծապատկեր 8 - Հանրության ցանկությունը, որպեսզի համայնքի կին ղեկավարը շարունակի իր պաշտոնավարումը(բնակիչներ)



*-Պատասխաններում ներառված չեն դժվարանում է պատասխանել և չգիտի տարբերակները

Սա կարող է բացատվել այն հանգամանով, որ հետպատերազմյան շրջանում հանրությունը և հատկապես կանայք հետևողով կարծրատիպային պատկերացումներին ձգտում են դեպի ուժային կենտրոն, կարծելով, որ տղամարդը լինելով ֆիզիկապես ավելի ուժեղ և ռազմական գործողությունների հիմնական կատարող միանշանակորեն նույնականցվում է տվյալ ժամանակահատվածի հիմնական և միակ վստահելի դերակատարի հետ:

3.1.2 Հանրային ընկալումներն ավագանու կին անդամի մասին

Համայնքի կին ավագանու վերաբերյալ ընկալումները տարբերվում են բնակիչների շրջանում և ԾԹԲ-ների ու ԾՇ-ների շրջանում: Այն բնակավայրերում, որտեղ Ծրագրի շրջանակներում իրականացվել են հստակ միջոցառումներ, բնակիչները, հավանաբար, առավել ճիշտ գործիքներով են կարողանում գնահատել ավագանու կին անդամի գործունեությունը: ԾԹԲ-ների հարցվողների 62%-ի կարծիքով ավագանու կին անդամներն ավելի լավ են աշխատում, քան՝ տղամարդիկ, իսկ ԾՇ-ների 43%-ն է այդ կարծիքին(**Աղյուսակ 9**):

Մինչդեռ բնակիչների մոտ պատկերն այլ է: Նախ՝ նշենք, որ հարցվողների 20%-ն է նշել, որ իրենց համայնքում ավագանու անդամների կազմում կան կանայք (**Գծապատկեր 9**),ԾԹԲ-ների 71%-ը, իսկ ԾՇ-ների՝ 63%-ը:

Գծապատկեր 9 - Ավագանու անդամների կազմում կանանց առկայությունը(բնակիչներ)



Բնակիչների շրջանում ավագանու կին անդամների մասին կարծիքը փոխվել է:Հանրության այն կարծիքը, որ ավագանու կին անդամներն ավելի լավ են աշխատում, քան՝ տղամարդիկ՝ ցուցանիշն իջել է 4 կետով, ինչպես նաև, բնակիչները ոեն կարծում , որ կանայք ավելի վատ են աշխատում, քան՝ տղամարդիկ (**Աղյուսակ 9**): Այնուամենայնիվ, **ամենակարևոր ցուցանիշը, որն իրականում և տանելու է դեպի հավասարության սկզբունքների ճիշտ ընկալումն՝ առկա է – բնակիչների կարծիքը, որ կանայք կատարում են իրենք պարտականությունները նույնպես ինչպես և ավագանու տղամարդ անդամներ աճել է 4 կետով իսկ թիրախային վայրերում 18 կետով:**

Աղյուսակ 9 - Ավագանու կին անդամի կողմից պարտականությունների կատարումը (բնակիչներ, ԾԹԲ, ԾՇ)

Գնահատականներ	2019	2021	Թիրախա-յին բնակա-վայրեր	Ծրագրի շահառու-ներ
Ավելիվատ, քանավագանուտղամարդանդամները	11%	13%	3%	3%
Այնպես, ինչպեսավագանուտղամարդանդամները	35%	39%	34%	52%
Ավելիլավ, քանավագանուտղամարդանդամները	30%	26%	62%	43%
Դժվար. է պատասխ.	25%	22%	1%	2%
Ընդամենը	**100%**	**100%**	**100%**	**100%**

Անդրադառնալով հանրային ընկալումներին՝ նշենք, որ ընկալման փոփոխությունն ակնհայտ է հատկապես կանանց շրջանում: 2019 թվականին կանայք ավելի շատ էին հակված մտածելու, որ ավագանու կին անդամն ավելի լավ է աշխատում, քան՝ տղամարդ անդամը: Մինչդեռ այսօր, նրանք ավելի հակված են մտածելու, որկինը իրականացնում է, իր պարտականությունները «Այնպես, ինչպես ավագանու տղամարդ անդամները» – աճ 5 տոկոսով (**Աղյուսակ 10**): Ավագանու կին անդամի կողմից իր պարտականությունների կատարման հարցում տղամարդիկ ավելի անփոփոխ են մնացել իրենց կարծիքներում, ինչպես դրական գնահատականի դեպքում, այնպես էլ՝ բացասական: Այն հարցերի վերաբերյալ թե «կանայք ավելի վատ են աշխատում, քան՝ տղամարդիկ» և «կանայք ավելի լավվատ են աշխատում, քան՝ տղամարդիկ», տղամարդկանց կարծիքի ցուցանիշը փոփոխվել է ընդամենը 1%-ով, մինչդեռ «Այնպես, ինչպես ավագանու տղամարդ անդամները» տարբերակի դեպքում աճել է 3 %-ով:

Աղյուսակ 10 - Ավագանու կին անդամի կողմից պարտականությունների կատարման գնահատումն ըստ սեռերի(բնակիչներ)

Գնահատականներ	2019		2021	
	Ար	Իգ	Ար	Իգ
Ավելիվատ, քանավագանուտղամարդանդամները	13%	9%	14%	13%
Այնպես, ինչպեսավագանուտղամարդանդամները	35%	35%	38%	40%
Ավելիլավ, քանավագանուտղամարդանդամները	25%	33%	24%	26%
Դժվար. է պատասխ.	26%	24%	25%	21%
Ընդամենը	**100%**	**100%**	**100%**	**100%**

Ավագանու կին անդամի պարտականությունների գնահատման հարցում հետաքրքիր է արձանագրել, երիտասարդներն այս հարցի շուրջ հակված են տեսնելու կամ տեսնում են «գենդերային հավասարություն»: **18-37 տարիքային խմբերի հարցվողների շրջանում ամենից շատն է աճել ցուցանիշը՝ ավագանու տղամարդ և կին անդամներն աշխատում են նույն ձև հարցի շուրջ:**

Կաևոր է, որ անգամ բնակիչների ցանկությունը ինչպես նաև ԾԹԲ-ների և ԾՇ-ների շրջանում ավագանու կին անդամի պաշտոնավարումը շարունակելու վերաբերյալ մնացել է գրեթե անփոփոխ (-2%)(**Գծապատկեր 10** և **Գծապատկեր 11**), բայց ակնհայտ է, որ բնակիչների և ԾԹԲ-ների և ԾՇ-ների շրջանում ընդհանուր ընկալումը տարբերվում է 23% և21%: Ավագանու կին անդամի պաշտոնավարման ցանկությունն առավել բարձր է ԾԹԲ-ների և ԾՇ-ների շրջանում ԾԹԲ-ների հարցվողների 99%-ը ցանկանում է, որպեսզի ավագանու կին անդամները շարունակեն իրենց պաշտոնավարումը: Նշենք մեկ կարևոր փաստ ևս. ԾԹԲ-ների և ԾՇ-ների կողմից շատ կարևոր է ավագանու կին անդամի պաշտոնավարման իրողությունը, ինչով պայմանավորված չեն տրվել «ինձ համար միևնույնն է» պատասխանը:

Գծապատկեր 10 - Հանրության ցանկությունը, որպեսզի ավագանու կին անդամը շարունակի իր պաշտոնավարումը (բնակիչներ)

2019	2021



*- Պատասխաններում ներառված չեն դժվարանում է պատասխանել և չգիտի տարբերակները

Գծապատկեր 11 - Հանրության ցանկությունը, որպեսզի ավագանու կին անդամը համայնքի կառավարման հարցումիր պաշտոնավարումը ըստ թիրախային բնակավայրերի և Ծրագրի շահառուների



*- Պատասխաններում ներառված չեն դժվարանում է պատասխանել և չգիտի տարբերակները

Առավել հետաքրքրություն են առաջացնում «քանի տոկոս պետք է կազմեն կանայք ավագանիում» հարցին տրված պատասխանները: Առաջարկված 3 հիմնական տարբերակներին, այն է՝ 25%, 30% և 50%,բնակիչների, ԾԹԲ-ների, ԾՇ-ների և այն բնակավայրերի, որտեղ կան ավագանու կին անդամներ՝ տարբեր է: Բնակիչների շրջանում 2% ավելացել է հանրության այն կարծիքը, որ կանայքչպետք է լինեն ավագանիում: Սակայն, այն բնակավայրերում, որտեղ կան ավագանու կին անդամներ, բնակիչներն առավել հակված են, որպեսզի ավագանու կազմում կանայք լինեն առաջադրված առավել բարձր տոկոսով՝ 50%: **Ակնհայտ է հարցի վերաբերյալ հանրային ընկալումների տարբերությունն այն բնակավայրերում և այն շահառուների շրջանում, որոնք Ծրագրի ազդեցության անմիջական կրողներն են(Աղյուսակ 11):**ԾԹԲ-ների հարցվողների 74%-ը, իսկ ԾՇ-ների 65%-ը ցանկանում է, որպեսզի կանայք կազմեն ավագանու անդամների կեսը (50%): Մյուս կողմից, այս երկու խմբերի հարցվողներից որևէ մի հացվող չի նշել, որ իր համար միևնույնն է, թե կանայք քանի տոկոս կկազմեն ավագանիում, ինչպես նաև որևէ մի հարցվող չի նշել, որ կանայք ավագանիում պետք է կազմեն 0%: Կարծում ենք, որ սա շատ կարևոր ցուցանիշ է, ինչը խոսում է այն մասին, որ **Ծրագրի ազդեցության անմիջական կրողների ընկալումներում տեղի են ունեցել ակնհայտ դրական փոփոխություններ կին ավագանու դերի վերաբերյալ**:

Աղյուսակ 11 - Կանայք քանի տոկոս պետք է կազմեն ավագանիում ըստ հանրային ընկալման

Գնահատականներ	2019	2021	Թիրախա-յին բնակավայրեր	Ծրագրի շահառու-ներ	Բնակա-վայրեր, որտեղ կան ավագանու կին անդամներ
0%	3%	5%	0%	0%	2%
Միևնույն է	2%	2%	0%	0%	2%
25%	19%	18%	4%	3%	19%
30%	27%	28%	22%	32%	26%
50%	47%	46%	74%	65%	50%
Դժվար. է պատասխ.	2%	1%	0%	0%	0%
Ընդամենը	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**

Բնակիչների շրջանում երիտասարդների մոտ ավելի բարձր է ցանկությունն առ այն, որ ավագանիում կանայք կազմեն 50%:

Խոսելով համայնքի կին ղեկավարների և ավագանու կին անդամների մասին առկա ընկալումների և սպասելիքների մասին՝ անդրադարձել ենք նաև այն հարցին, թե որ տարիքի կանանց է հանրությունը տեսնում ՏԻՄ-երում: Պարզվում է, հանրությունն առավել հակված է ՏԻՄ-ում տեսնել 40-62 տարիքային խմբի կանանց:

Հատկապես 40-62 տարիքային խմբի կանանց ՏԻՄ-երում տեսնելը տարածված է հետազոտության բոլոր տեսակի մասնակիցների շրջանում: Այդ կարծիքն ընդգծված է նաև ԾԹԲ-ների և ԾՇ-ների մոտ: Միակ տարբերությունն ընկալումներում կայանում է նրանում, որ վերջիններս առավել հակված են մտածելու, որ կանայք պետք է ներգրավված լինեն ՏԻՄ-երում՝ անկախ տարիքից (**Աղյուսակ 12**):

Աղյուսակ 12 - Որ տարիքի կանայք պետք է ավելի շատ ներգրավված լինեն ՏԻՄ-ում (բնակիչներ, ԾԹԲ, ԾՇ)

Գնահատականներ	2019	2021	Թիրախային բնակավայ-րեր	Ծրագրի շահառուներ
Կանայքընդհանրապեսչպետք է ներգրավվածլինեն՝ անկախտարիքից	1%	1%	0%	0%
63 և ավելտարեկան	1%	1%	0%	0%
40-62 տարեկան	68%	71%	73%	54%
18-39 տարեկան	27%	23%	21%	37%
Կանայքպետք է ներգրավվածլինեն՝ անկախտարիքից	3%	4%	6%	8%
Դժվար. է պատասխ.	1%	1%	0%	1%
Ընդամենը	**100%**	**100%**	**100%**	**100%**

3.1.3 Կին թեկնածուին ընտրելու բնութագրիչները

Ընտրությունների ժամանակ կնոջ դերի կարևորումը և նախապատվություն տալն ակնհայտ տարբերվում է ԾԹԲ-ներում և ԾՇ-ի շրջանում:Եթե բնակիչների 11%-ն է ավագանու ընտրության ժամանակ ձայն տվել կնոջը, ապա ԾԹԲ-ների բնակիչների 70%, իսկ ԾՇ-ների 51%-ը(**Աղյուսակ 13**): Ազգային ժողովի և համայնքի ղեկավարի ընտրությունների պարագայում ևս տարբերությունն ակնհայտ է,ինչը խոսում է այն մասին, որ Ծրագրի դրական ազդեցության մասին: Այդ հանրության շրջանում կնոջը ՏԻՄ-ում կամ որևէ քաղաքական դիրքում տեսնելը դարձել է կարևոր պահանջ: Ընդ որում, այդ պահանջն արտահայտվում է ոչ միայն տեսական հարթությունում, այլև՝ գործնական՝ ի թիվս ընտրության ժամանակ ձայն տալով:

Աղյուսակ 13 - Հարցվողներ, որոնք ընտրությունների ժամանակ քվեարկել են կին թեկնածուի օգտին (բնակիչներ, ԾԹԲ, ԾՇ)

Ընտրություններ	2019	2021	Թիրախա-յին բնակա-վայրեր	Ծրագրի շահա-ռուներ
Ավագանու	13%	11%	70%	51%
Համայնքի ղեկավարի	9%	9%	15%	7%
Ազգային ժողովի	16%	12%	36%	46%

*- Բազմակի պատասխանների հնարավորություն

Իսկ ինչ բնութագրիչներ է կարևորում հանրությունը՝ կին թեկնածուին ընտրելիս: Արդյոք այդ ընտրության հիմքում սոցիալ-մշակութային գործոններն են, թե՝ մասնագիտական, գաղափարական, քաղաքական նախապատվության կողմնորոշիչները: Կին թեկնածուին ընտրելիս բնութագիչների կարևորման հարցերում որոշ փոփոխություններ կարելի է համարել դրական, որոշները՝ բացասական: Օրինակ՝ կարծում ենք, որ բացասական փոփոխություն պետք է դիտարկել այն հանգամանքը, որ բնակիչների կողմից դեռ շարունակվում է կարևորվել կնոջ ընտանեկան կարգավիճակը: Ընդ որում, այս ցուցանիշն ամենից շատ փոփոխվածներից է՝ +6%(**Աղյուսակ 14**):Կարծում ենք, որ վերջին շրջանում Հայաստանում

տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում հանրության շրջանում բարձրացել է կրոնից ունեցած ակնկալիքները, ինչն արտահայտվում է նաև քաղաքականության մեջ, ուստի՝ հաջորդ ամենից շատ փոփոխված ցուցանիշը վերաբերվում է կին թեկնածուի կրոնական հայացքներին: 2 տարվա ընթացքում այդ ցուցանիշն աճել է +7%-ով:

Ծրագրի շրջանակներում տեղի ունեցած գործողությունների արդյունքում ԾԹԲ-ներում և ԾԾ-ների շրջանում ավելի քիչ է արտահայտված այն ընկալումը, որ կինը պետք է լինի ծանոթ կամ բարեկամ, որպեսզի ընտրությունների ժամանակ ձայն տան: Ունենալով կնոջ մասին հստակ ձևավորված ընկալումներ՝ կնոջը քաղաքականության մեջ տեսնելու համար հանրության այս շրջանակի կողմից առավել կարևոր են կնոջ մտավոր ունակությունները, նախընտրական ծրագրերը:

Աղյուսակ 14 - Բնութագրիչներ, որոնք կարևորվել են կին թեկնածուին ընտրելիս (բնակիչներ, ԾԹԲ, ԾԾ)

Բնութագրիչներ	2019	2021	Թիրախային բնակավայրեր	Ծրագրի շահառուներ
Ընտանեկանկարգավիճակը	37%	43%	41%	37%
Ծանոթ, բարեկամլինելը	20%	19%	8%	10%
Քաղաքականհայացքները	74%	71%	65%	73%
Կրոնականհայացքները	39%	46%	28%	24%
Կիրթ, խելացիլինելը	97%	99%	100%	96%
Կինլինելը	68%	69%	80%	71%
Լավմասնագետլինելը	94%	95%	96%	94%
Համայնքումհարգվածլինելը	87%	88%	100%	83%
Նախընտրականծրագիրը	83%	81%	88%	91%

Բնակիչների շրջանում կանանց և տղամարդկանց մոտեցումները կին թեկնածուին ընտրելիս որոշ բնութագրիչների շուրջ շատ տարբեր են: Վերջին 2 տարիների ընթացքում կանայք ավելի շատ են սկսել կարևորել կին թեկնածուի ընտանեկան կարգավիճակը, քան՝ տղամարդիկ (**Աղյուսակ 15**): Փոխարենը, կանայք սկսել են ավելի քիչ կարևորել ծանոթ, բարեկամ լինելու հանգամանքը: Առավել կարևոր ենք համարում անդրադառնալ այն փաստին, որ կանայք սկսել են կարևորել կին թեկնածուի նախընտրական ծրագիրը:

Աղյուսակ 15 - Բնութագրիչներ, որոնք կարևորվել կին թեկնածուին ընտրելիս՝ ըստ հարցվողների սեռի (բնակիչներ)

Բնութագրիչներ	2019		2021	
	Ար	Իգ	Ար	Իգ
Ընտանեկանկարգավիճակը	41%	34%	45%	41%
Ծանոթ, բարեկամլինելը	21%	19%	21%	17%
Քաղաքականհայացքները	71%	75%	66%	72%
Կրոնականհայացքները	40%	38%	51%	42%
Կիրթ, խելացիլինելը	94%	98%	96%	99%
Կինլինելը	59%	74%	60%	73%
Լավմասնագետլինելը	91%	95%	93%	95%
Համայնքումհարգվածլինելը	84%	88%	83%	89%
Նախընտրականծրագիրը	81%	84%	73%	85%

Կնոջն ընտրելիս նրա ընտանեկան կարգավիճակը և ծանոթ, բարեկամ լինելու հանգամանքը կարևորելը կտրուկ աճել է քաղաքային բնակավայրերում(**Աղյուսակ 16**): Եվ հակառակը, այդ երկու գործոնների կարևորումը նվազել է գյուղական բնակավայրերում: Փաստորեն, այնպիսի սոցիալ-մշակութային խորը արմատներ ունեցող երևույթներ, ինչպիսիք են՝ կնոջ ընտանեկան կարգավիճակը և ծանոթ, բարեկամ լինելը, առավել ակնհայտհաղթահարվել է գյուղական բնակավայրերում, քան՝ քաղաքային: Այս փաստը, կարծում ենք, շատ կարևոր ցուցիչ է:

Աղյուսակ 16 - Բնութագրիչներ, որոնք կարևորվել կին թեկնածուին ընտրելիս՝ ըստ բնակավայրի տիպի (բնակիչներ)

Բնութագրիչներ	2019		2021	
	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք
Ընտանեկանկարգավիճակը	46%	29%	45%	40%
Ծանոթ, բարեկամլինելը	31%	11%	19%	18%
Քաղաքականհայացքները	65%	80%	62%	78%
Կրոնականհայացքները	41%	37%	43%	47%

Կիրթ, խելացիլինելը	97%	96%	98%	97%
Կինլինելը	72%	64%	72%	66%
Լավմասնագետլինելը	97%	91%	93%	95%
Համայնքումհարգվածլինելը	92%	82%	95%	80%
Նախընտրականծրագիրը	83%	83%	81%	81%

Ընտրությունների ընթացքում նախապատվությունը կին կամ տղամարդ թեկնածուներին տալու վերաբերյալ կարծիքը փոխվել է (+4%) տղամարդուն առավելություն տալու տեսակետից, բայց հավասար վերաբերմունքի մասին կարծիքը մնացել է գրեթե անփոփոխ (-1%)(**Գծապատկեր 12**):Սակայն, ինչպես մինչ այս քննարկվող հարցերի պարագայում, այս դեպքում ևս հանրային ընկալումներում տարբերվում են այն հարցվողները, որոնք Ծրագրի անմիջական շահառուներ են: ԾԹԲ-ների և ԾՇ-ների շրջանում ակնհայտ ցածր է միանշանակ տղամարդ թեկնածուին նախապատվություն տալու ցուցանիշները: Եթե բնակիչների 25%-ն էր նշել, որ ընտրությունների դեպքում միանշանակ քվեարկելու է տղամարդ թեկնածուի օգտին, ապա ԾԹԲ-ների և ԾՇ-ների՝ 8-10%-ը(**Գծապատկեր 13**): Այս հարցվողներն առավել կողմնակից են հավասարության՝ գտնելով, որ ՏԻՄ-ում կանանց և տղամարդկանց ներգրավվածությունը պետք է լինի հավասար:

Գծապատկեր 12 - Հարցվողների քանակը, որոնք համայնքում ընտրությունների դեպքում նախապատվությունը կտան կին կամ տղամարդ թեկնածուի (բնակիչներ)



*-Պատասխաններում ներառված չեն դժվարանում է պատասխանել և չգիտի տարբերակները

Գծապատկեր 13 - Հարցվողների քանակը, որոնք համայնքում ընտրությունների դեպքում նախապատվությունը կտան կին կամ տղամարդ թեկնածուի ըստ թիրախային բնակավայրերի և Ծրագրի շահառուների



* - Պատասխաններում ներառված չեն դժվարանում է պատասխանել և չգիտի տարբերակները

3.2 ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ ՏԻՄ-ԵՐՈՒՄ. ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ

3.2.1 ՏԻՄ-երում կանանց ներգրավվածության ընդլայնման խոչընդոտները

Վերջին տարիներին Հայաստանում տեղի են ունենում բազմաթիվ ծրագրեր, միջոցառումներ, օրենսդրական փոփոխություններ, որոնք միտված են բարձրացնելու կանանց քաղաքական ակտիվությունը և մասնակցությունը, այդ թվում՝ ՏԻՄ-երում:

ՏԻՄ-երում կանանց ներգրավվածության ընդլայնման խոչընդոտների վերաբերյալ ընկալումները տարբերվում են հանրության տարբեր շերտերում: Այն բնակավայրերում, որտեղ կան ավագանու կին անդամներ, հանրության դիրքորոշումը շատ հարցերի վերաբերյալ ակնհայտորեն տարբերվում է ընդհանուր պատկերից: Մյուս կողմից, հանրային ընկալումներն այս հարցի շուրջ փոխվել են այն բնակիչների շրջանում, որոնք թիրախավորվել են Ծրագրի կողմից: Այսպես, բնակիչների ընկալումներում ավելի է արմատացել այն միտքը, որ ավագանու անդամ կամ համայնքի ղեկավար լինելը կնոջը հարիր աշխատանք չէ: Այդ խոչընդոտի ցուցանիշն աճել է +4%-ով (**Աղյուսակ 17**): Մինչդեռ, այդ ընկալմն չունեն ԾԹԲ-ների հարցվողները և ԾՇ-ները(դրական տարբերությունը 18%), ինչպես նաև, այն բնակավայրերի ներկայացուցիչները, որտեղ կան ավագանու կին անդամներ(դրական տարբերությունը 5%)(**Աղյուսակ 18**):

Աղյուսակ 17 - Պատճառներ, որոնք խանգարում են կանանց դառնալ համայնքի ղեկավար կամ ավագանու անդամ(բնակիչներ)

Պատճառներ	2019	2021
Կանայքչունենհամապատասխանկրթություն	32%	37%
Կանայքունենկառավարչականիմտություններիպակաս	46%	50%
Կնոջըհարիրաշխատանքչէ	20%	24%
Կանայքիրենքչենցանկանում	55%	56%
Կանանցթույլչենտալիսընտանիքիանդամները	73%	74%
Խանգարում է կինլինելը	38%	44%
Կանանցխանգարում է հասարակությանբացասականվերաբերմունքը	51%	54%
Չընտրվելուպարագայումհարգանքիկորստիվախըկամամոթիզգացումը	38%	37%
Մեծպատասխանատվությունիցխուսափելը	48%	53%
Կինըչիկարողհիշտ/համապատասխանորոշումներկայացնել	16%	18%
Կինըչիկարողհամատեղելընտանիքը և այդաշխատանքը	37%	42%
Ֆինանսականմիջոցներիսղությունը/բացակայությունը	44%	47%
Տեղեկատվությանպակասը (ընտրություններիգործընթացի, համայնքիղեկավարիլիազորություններիմասին և այլն)	45%	50%
Կառավարությունըբավարարչափովչիկարևորումկանանցմասնակցությունըքաղաքականությանը	41%	48%
Օրենսդրությանոչլիարժեքլինելը	42%	49%
Ավագանուանդամիաշխատանքըչվարձատրվող է	51%	63%

Աղյուսակ 18 - Պատճառներ, որոնք խանգարում են կանանց դառնալ համայնքի ղեկավար կամ ավագանու անդամ ըստ թիրախային բնակավայրերի, Ծրագրի շահառուների և այն բնակավայրերի, որտեղ կան ավագանու կին անդամներ

Պատճառներ	Թիրախա-յին բնակա-վայրեր	Ծրագրի շահառու-ներ	Բնակա-վայրեր, որտեղ կան ավագանու կին անդամներ
Կանայքչունենհամապատասխանկրթություն	16%	11%	28%
Կանայքունենկառավարչականիմտություններիպակաս	30%	34%	56%
Կնոջըհարիրաշխատանքչէ	6%	7%	19%
Կանայքիրենքչենցանկանում	69%	75%	56%
Կանանցթույլչենտալիսընտանիքիանդամները	81%	74%	70%
Խանգարում է կինլինելը	42%	37%	43%
Կանանցխանգարում է հասարակությանբացասականվերաբերմունքը	61%	61%	47%
Չընտրվելուպարագայումհարգանքիկորստիվախըկամամոթիզգացումը	34%	30%	31%

Մեծպատասխանատվությունիցխուսափելը	36%	33%	51%
Կինըչիկարողհիշտ/համապատասխանորոշումներկայացնել	3%	0%	15%
Կինըչիկարողհամատեղելընտանիքը և այդաշխատանքը	26%	18%	34%
Ֆինանսականմիջոցներիսղությունը/բացակայությունը	35%	35%	47%
Տեղեկատվությանպակասը (ընտրություններիգործընթացի, համայնքիղեկավարիլիազորություններիմասին և այլն)	45%	46%	44%
Կառավարությունըբավարարչափովչիկարևորումկանանցմասնակցությունըքաղաքականությանը	29%	43%	48%
Օրենսդրությանոչլիարժեքլինելը	41%	42%	52%
Ավագանուանդամիաշխատանքըչվարձատրվող է	52%	46%	58%

Փոփոխության է ենթարկվել նաև մյուս խոչընդոտները վերաբերյալ հանրային կարծիքը, որում ակնհայտ ենինչպես գենդերային կարծրատիպերի առկայությունը, այնպես էլ իրականության արտացոլումը, օրինակ. «Կինը չի կարող համատեղել ընտանիքը և այդ աշխատանքը» դրույթին համաձայնողների թիվը աժել է 5% , միանձնակ պարունակում է գենդերային կարծրատիպ կանանց այս կամ այն գործը կատարելու անկարողության, կամ միայն ընտանիքում զբաղված լինելու կարևորության մասին: Այնուամենայնիվ, բազմիցս խոսվել է կանանց համար ընտանեկան և աշխատանքային պարտականությունների համատեղման հնարավորությունների պակասի մասին, ինչը նույնպես շատ կարևոր գործոն որն իրականում և ընկած է գենդրային անհավասարության հիմքում. իրավունքն՝ առկա է, հնարավորությունը՝ ոչ:

Հարցի կարծրատիպային ընկալումները որոշ փոփոխության են ենթարկվել այն բնակավայրերում, որտեղ կան ավագանու կին անդամներ **(Աղյուսակ 18):** Կնոջ՝ քաղաքական գործունեության և ընտանիքի համատեղելիության վերաբերյալ ընկալումները խիստ տարբերվում են նաև ԾԹԲ-ների և ԾԾ-ների շրջանում: Եթե բնակիչների 42%-ն է կարծում, որ կինը չի կարող համատեղել ընտանիքը և այդ աշխատանքը, ապա ԾԾ-ների միայն18%-ը:

Մնացած խոչընդոտները, որոնցում ակնհայտ է ցուցանիշի աճ, վերաբերվում են կնոջ մասնագիտական, կրթական ունակություններին: Բնակիչները շարունակում են մտածել, որ կանայք չունեն համապատասխան կրթություն, չեն կարող համապատասխան որոշումներ կայացնել, ունեն կառավարչական հմտությունների պակաս և խուսափում են պատասխանատվություն կրել: **Մինչդեռ այս հարցերի պարագայում ևս պետք է նշենք Ծրագրի ունեցած ակնհայտ ազդեցության մասին, որի արդյունքում ԾԹԲ-ների բնակիչները և ԾԾ-ները այդ ընկալման կրողները չեն**: Հանրության այդ շրջանակներում արդեն իսկ տեղի են ունեցել փոփոխություններ և հաղթահարվել են կնոջ մասին առկա կարծրատիպային ընկալումները:

Կնոջը ավագանու անդամ կամ համայնքի ղեկավար դառնալուն խոչընդոտող պատճառների թվում պետք է անդրադառնանք նաև այն հանգամանքին, որ հանրությունը սկսել է ավելի մեծ ուշադրություն դարձնել օրենսդրական բացերին և կառավարության գործունեությանը: +7% ցուցանիշի աճ է գրանցվել այն երկու խոչընդոտների պարագայում, որոնցում հանրությունը նշում է, որ կանանց ներգրավվածությանը խանգարում է օրենսդրության ոչ լիարժեք լինելը և կառավարության կողմից կանանց մասնակցությունըոչ բավարար չափով կարևորելը:
Կարծում ենք, որ պետք է հատկապես ուշադրություն դարձնել ամենից բարձր ցուցանիշի աճ (+12%) գրանցած պատճառին, այն է՝ ավագանու անդամի աշխատանքը չվարձատրվող է, ինչը լուրջ խոչընդոտ է կանանց ընտանիքի բարեկեցության մասին հոգատարության և պատասխանատվության տեսակետից:

3.2.2 Պաշտոններ, որոնցում հանրությունը տեսնում է կանանց

Ինչպես արդեն պարզ դարձավ, մեր իրականությունում դեռ կան բազմաթիվ խոչընդոտներ, որոնք խանգարում են կանանց ՏԻՄ-ում զբաղեցնել որևէ պաշտոն: Իսկ որքանով են փոխվել հանրային ընկալումները՝ կնոջն այլ պաշտոններում տեսնելու հարցում՝ ավագանու անդամից մինչև երկրի նախագահ:

Երբ քննարկում էինք այն հարցը, թե արդյոք հանրությունը ցանկանում է, որպեսզի ավագանու կին անդամը շարունակի իր պարտականությունների կատարումը՝ այո պատասխանողների ցուցանիշը նվազել էր -2%-ով: Սակայն, այն դեպքում երբ առաջարկվում է դիտարկել կանանց մասնակցությունը որոշումների կայացման այլ մակարդակներում. ավագանու անդամ և փոխնախարար տեսնելու ցանկությունը աճում է, մինչդեռ մյուս դեպքերում մնում անփոփոխ կամ նվազում:

Ակնհայտ է, որ այն բնակավայրերում, որտեղ կան ավագանու կին անդամներ, կնոջը որևէ պաշտոնում տեսնելու հարցում հանրային ընկալումները դրական են և բարձր: (**Աղյուսակ 19**):

Աղյուսակ 19 - Պաշտոններ, որոնցում հանրությունը տեսնում է կանանց

Պաշտոններ	2019	2021	Թիրախա-յին բնակավայ-րեր	Ծրագրի շահառու-ներ	Բնակավայ-րեր, որտեղ կան ավագանու կին անդամներ
Գյուղիվարչականղեկավար	55%	51%	83%	78%	52%
Ավագանուանդամ	76%	77%	99%	99%	88%
Համայնքապետ	63%	63%	88%	81%	67%
Փոխմարզպետ	61%	60%	85%	80%	65%
Մարզպետ	52%	49%	87%	82%	50%
Փոխնախարար	68%	70%	95%	91%	76%
Նախարար	64%	62%	97%	92%	67%
Փոխվարչապետ	60%	57%	85%	81%	62%
Վարչապետ	46%	42%	85%	82%	40%
Նախագահ	50%	45%	74%	65%	43%
Ոչմեկում	8%	10%	0%	1%	5%

Այլ է խնդիրը, երբ հանրությունը խոսում է կնոջ մասին առավել վերացական, օրինակ՝ արդյոք կնոջը տեսնում եք մարզպետի պաշտոնում՝ առանց կարևորելու, թե որ կնոջ մասին է խոսքը, և խնդիրն այլ հարթություն է տեղափոխվում, երբ խոսում ես հստակ քո միջավայրում գտնվող կնոջ մասին: Հաջորդ դիտարկումը վերաբերվում է հենց այդ իրավիճակին՝ արդյոք հարցվողները տեսնում են իրենց համայնքում, իրենց միջավայրում բնակվող որևէ կնոջ որպես համայնքի ղեկավար, ավագանու անդամ կամ որևէ ղեկավար պաշտոնում:
Այսպես, եթե 2021թ. տվյալներով բնակիչների 61%-ն է իրենց համայնքում բնակվող որևէ կնոջ տեսնում այլ ղեկավար պաշտոնում, ապա ԾԹԲ-ների՝92% և ԾՇ-ների՝ 94%-ը(**Աղյուսակ 20**):**Փաստ, որը ևս մեկ անգամ խոսում է Ծրագրի ունեցած ազդեցության մասին**: Ավագանու կին անդամներ ունեցող բնակավայրերի հարցվողների կարծիքի պատկերը ևս տարբերվում է բնակիչների կարծիքից: Չնայած տարբերությունն այդքան էլ ակնառու չէ, սակայն խոսում է դրական տենդենցի մասին: Միգուցե դրանցից որոշներում կին ավագանու անդամները նոր են սկսել գործունեություն ծավալել, և բնակիչների ընկալումներում փոփոխության աստիճանը մեծ չէ:

Աղյուսակ 20 - Հարցվողների համայնքում բնակվող կանայք, որոնց ցանկանում են տեսնել որևէ պաշտոնում

Պաշտոններ	2019	2021	Թիրախա-յին բնակա-վայրեր	Ծրագրի շահա-ռուներ	Բնակա-վայրեր, որտեղ կան ավագանու կին անդամ-ներ
Համայնքիղեկավար	25%	21%	48%	47%	23%
Ավագանուանդամ	43%	35%	86%	89%	37%
Այլղեկավարպաշտոն	58%	61%	92%	94%	63%

*- Բազմակի պատասխանների հնարավորություն

Իսկ ինչպես են տարբերվում բնակիչների ընկալումները երևույթի վերաբերյալ՝ պայմանավորված սեռով և բնակության վայրով: Այլ ղեկավար պաշտոնում իրենց համայնքի որևէ կնոջ տեսնելու պարագայում ցուցանիշն աճել է հատկապես տղամարդկանց մոտ (+7%), մինչդեռ կանանց մոտ դրական փոփոխությունն առավել քիչ է (+3%):

3.2.3 ՏԻՄ-երում կանանց ներգրավվածության արդյունքում տեղի ունեցող փոփոխությունները

Որքան էլ նվազած լինի հանրության կողմից ՏԻՄ-երում կանանց տեսնելու ցուցանիշը, այնուամենայնիվ, կան ոլորտներ, որոնցում, ըստ հանրային ընկալումների, դրական փոփոխություններ կլինեն, եթե մեծանա կանանց ներգրավվածության աստիճանը: Այդ ոլորտները շարունակում են մնալ ավանդականորեն կանանց «համապատասխան» համարվող ոլորտները, ինչպիսիք են՝ մշակույթը, կրթությունը, տուրիզմը, երիտասարդներին ու երեխաներին վերաբերվող հարցերը, առողջապահության ոլորտը (**Աղյուսակ 21**):Հետաքրքիր է, որ աճել է սպորտի զարգացման հարցում կանանց կարևորությունը տեսնելու ցուցանիշը (+6%), ընդ որում, ամենից բարձր աճի ցուցանիշներից մեկն է:

Մինչդեռ, բնակիչների ընկալումներում 1-6% նվազել է կանանց ներգրավվածության արդյունքում բարեփոխումների ակնկալիքն այնպիսի ոլորտներում և հիմնախնդիրներում, ինչպիսիք են՝ *Ավագանու աշխատանքների արդյունավետության բարձրացում, Կանանց և տղամարդկանց միջև անհավասարության հաղթահարում, Բնապահպանական խնդիրների լուծում, Կաշառակերության նվազեցում:* Այս իրավիճակը կարող բացատրվել նաև ակնառու օրինակների բացակայությամբ, ինչն ունի իր ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ Հայաստանում այս տարիների ընթացքում տեղի ունեցած համաճարակային, պատերազմանական և քաղաքական ճգնաժամով պայմանավորված օբյեկտիվ պատճառները:

Հանրային ընկալումներում կանանց դերի ընկալման փոփոխություն հնարավոր է, եթե այդ ուղղությամբ իրականացվում է աշխատանք: Այսպես, կանանց ներգրավվածության արդյունքում ՏԻՄ-երում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ սպասելիքները և գնահատականները տարբերվում են հանրության այն մասիմոտ, որն եղել է Ծրագրի անմիջական մասնակիցը: Բոլոր ոլորտներին վերաբերվող հարցերում Ծրագրի շահառուների մոտ ընկալումները դրականորեն տարբերվում են բնակիչների ընկալումներից (**Աղյուսակ 21**):

Աղյուսակ 21 - Որ ոլորտներում կարող է փոփոխությունների հանգեցնել կանանց ներգրավվածության ընդլայնումը ՏԻՄ-երում(բնակիչներ, ԾԹԲ, ԾՇ)

Ոլորտներ	2019	2021	Թիրախա-յին բնակա-վայրեր	Ծրագրի շահառու-ներ
Երիտասարդներին և երեխաներինվերաբերողհարցերիլուծմանը	94%	94%	98%	97%
Մշակույթիզարգացմանը	89%	91%	98%	96%
Կրթությանբարելավմանը	84%	86%	95%	95%
Բռնություններինվազեցմանըկամվերացմանը	83%	84%	90%	91%
Առողջապահությանոլորտիբարելավմանը	82%	85%	92%	93%
Տուրիզմիզարգացմանը	81%	84%	91%	93%
Սոցիալ-տնտեսականիրավիճակիբարելավմանը	79%	78%	91%	89%
Համայնքիանդամներիհամախմբմանը	77%	78%	94%	94%
Ավելիարդարորոշումներիկայացմանը	77%	77%	95%	90%
Ավագանուաշխատանքներիարդյունավետությանբարձրացմանը	76%	74%	96%	94%
Կանանց և տղամարդկանցմիջևանհավասարությանհաղթահարմանը	74%	70%	89%	89%
Բնապահպանականխնդիրներիլուծմանը	74%	73%	84%	85%
Կաշառակերությաննվազեցմանը	54%	48%	63%	60%
Սպորտիզարգացմանը	51%	55%	80%	73%

Բնակիչների շրջանում ՏԻՄ-երում կանանց ներգրավվածության ընդլայնման արդյունքում դրական փոփոխություններ տեսնում են նաև տղամարդիկ (Աղյուսակ 22):Օրինակ՝ ավանդաբար տղամարդկային դաշտ համարվող սպորտի ոլորտում անգամ տղամարդիկ առավել հակված են մտածելու, որ կանայք կարող են փոփոխություններ իրականացնել: Մշակույթի, կրթության ոլորտներում, եթե կանանց

սպասելիքներն իրենց տեսակից մնացել են նույնը կամ նվազել են, ապա տղամարդկանց շրջանում դրանք աճել են:

Աղյուսակ 22 - Որ ոլորտներում կարող է փոփոխությունների հանգեցնել կանանց ներգրավվածության ընդլայնումը ՏԻՄ-երում ըստ սեռի(բնակիչներ)

Ոլորտներ	2019		2021	
	Ար	Իգ	Ար	Իգ
Երիտասարդներին և երեխաներինվերաբերողհարցերիլուծմանը	93%	95%	93%	95%
Մշակույթիզարգացմանը	88%	90%	95%	90%
Կրթությանբարելավմանը	82%	86%	88%	85%
Բռնություններինվազեցմանըկամվերացմանը	79%	86%	81%	86%
Առողջապահությանոլորտիբարելավմանը	80%	83%	85%	85%
Տուրիզմիզարգացմանը	80%	82%	84%	84%
Սոցիալ-տնտեսականիրավիճակիբարելավմանը	75%	82%	73%	80%
Համայնքիանդամներիհամախմբմանը	75%	79%	76%	80%
Ավելիարդարորոշումներիկայացմանը	73%	79%	74%	78%
Ավագանուաշխատանքներիարդյունավետությանբարձրացմանը	73%	77%	73%	75%
Կանանց և տղամարդկանցմիջևանհավասարությանհաղթահարմանը	67%	80%	68%	71%
Բնապահպանականխնդիրներիլուծմանը	71%	75%	74%	72%
Կաշառակերությաննվազեցմանը	56%	53%	50%	47%
Սպորտիզարգացմանը	49%	53%	55%	55%

3.3 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԴԵՐԵՐԸ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ԿԱՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Կնոջ և տղամարդու գենդերային դերերի տարբերություններն արտահայտված են գրեթե բոլոր ոլորտներում: Այն հատկապես արտահայտված է առօրեականության հարթությունում, որտեղ մշակույթի ուժով պայմանավորված՝ այդ դերերն ունեն առավել կարծրատիպային դրսևորումներ: Սակայն արդեն իսկ ՏԻՄ-երում, քաղաքականության մեջ կնոջ և տղամարդու բնութագրիչները պետք է լինեն նույնական, համընդհանուր, զերծ սեռով պայմանավորված մոտեցումներից, քանի որ խոսքը գնում է հանրային ծառայողի կամ պետական պաշտոնյայի մասին: Հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ հայ իրականությունում սեռով պայմանավորված բնութագիչները կարևորվում և տարածվում են նաև ՏԻՄ ոլորտում պաշտոն զբաղեցնելու դեպքում:

Օրինակ՝ համայնքապետի կամ ավագանու պաշտոն զբաղեցնելու պարագայում կնոջ համար ավելի կարևոր է արտաքին տեսքը, քան՝ տղամարդու համար (**Աղյուսակ 23** և**Աղյուսակ 24**): Ընդ որում, այդ ընկալումն այնքան կարծրացած է, որ 2 տարիների ընթացքում չի ենթարկվել որևէ փոփոխության: Նույն մոտեցումը վերաբերվում է ամուսնական կարգավիճակին, որն ավելի խանգարող դերակատարություն ունի կնոջ համար, քան՝ տղամարդու: Այսինքն, համայնքի ղեկավար կամ ավագանու անդամ լինելու համար կարևոր է, որպեսզի կինն ամուսնացած չլինի, հակառակ պարագայում անհնարին կամ շատ դժվար կլինի կնոջ համար համատեղել պաշտոնն ու ընտանիքը: Մինչդեռ տղամարդու պարագայում այն առավել պակաս կարևորության հարց է:Սակայն, որքան էլ երևույթն ունի խոր արմատներ և դժվարությամբ է ենթարկվում փոփոխությունների, այնուամենայնիվ, հանրության որոշ շերտերում արդեն իսկ ակնհայտ են փոփոխություններ: Օրինակ՝ 2021թ. տվյալների համաձայն բնակիչների 18. 5%-ն է նշել, որ ՏԻՄ պաշտոն զբաղեցնելու համար կինը պետք է ամուսնացած չլինի: Մինչդեռ, Ծրագրի շահառուների միայն 4%-ն է կարևորել այդ գործոնը(**Աղյուսակ 25**): Այսինքն, հանրության այն մասը, որը մասնակցել է Ծրագրի շրջանակում իրականացված միջոցառումների կամ գործողությունների՝ փոխել է (կամ պահպանել է) իր դիրքորոշումն առ այն, որ կինը կարող է լինել ամուսնացած և միաժամանակ լինել համայնքի ղեկավար կամ ավագանու անդամ:

Համայնքապետի կամ ավագանու պաշտոն զբաղեցնելու դեպքում կնոջ և տղամարդու համար կարևոր բնութագրիչներըբնակիչների ընկալումներում 2 տարիների ընթացքում առանձնակի փոփոխությունների չեն ենթարկվել: ՏԻՄ պաշտոն զբաղեցնելու համար ծանոթություններ, կապեր ունենալու գործոնն է ավելի շատ սկսվել կարևորվել կնոջ դեպքում՝ ցուցանիշն աճելով +6%-ով, մինչդեռ տղամարդու դեպքում՝ +2%:

Չանդրադառնալով հանրային նման ընկալման ձևավորման դրդապատճառներին՝ նշենք միայն, որ ՏԻՄ պաշտոն զբաղեցնելու համար՝ և՛ կնոջ, և՛ տղամարդու դեպքում հանրությունն ավելի շատ է սկսել կարևորել աշխատանքային փորձ ունենալու փաստը: Հաջորդ գործոնը, որի ցուցանիշն ամենից շատն է փոխվել 2 տարիների ընթացքում՝ ֆինանսական միջոցների առկայությունն է: Այսինքն, հանրությունն ավելի շատ է սկսել մտածել այն մասին, որ ՏԻՄ պաշտոն զբաղեցնելու համար, անկախ սեռից, անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ:

Աղյուսակ 23 - Համայնքապետի կամ ավագանու անդամի պաշտոն զբաղեցնելու դեպքում կնոջ համար կարևոր բնութագիչները(բնակիչներ)

Բնութագրիչներ	2019	2021
Համապատասխանկրթություն	94%	95%
Կառավարմանհմտություններ	93%	94%
Ծանոթություններ, կապեր	63%	67%
Հաղորդակցությանհմտություններ	93%	94%
Արտաքինտեսք	66%	68%
Լեզուներիիմացություն	96%	97%
Համակարգչայինգիտելիքներ	96%	96%
Աշխատանքայինփորձ	82%	86%
Ամուսնացածչլինելը	18%	18%
Ֆինանսականմիջոցներ	53%	56%

Աղյուսակ 24 - Համայնքապետի կամ ավագանու անդամի պաշտոն զբաղեցնելու դեպքում տղամարդու համար կարևոր բնութագրիչները(բնակիչներ)

Բնութագրիչներ	2019	2021
Համապատասխանկրթություն	94%	95%
Կառավարմանհմտություններ	96%	97%
Ծանոթություններ, կապեր	68%	70%
Հաղորդակցությանհմտություններ	94%	95%
Արտաքինտեսք	53%	55%
Լեզուներիիմացություն	95%	96%
Համակարգչայինգիտելիքներ	95%	96%
Աշխատանքայինփորձ	83%	87%
Ամուսնացածչլինելը	12%	12%
Ֆինանսականմիջոցներ	55%	60%

Աղյուսակ 25 - Համայնքապետի կամ ավագանու անդամի պաշտոն զբաղեցնելու դեպքում կնոջ և տղամարդու համար կարևոր բնութագրիչները ըստ թիրախային բնակավայրերի և Ծրագրի շահառուների

Բնութագրիչներ	Կնոջ դեպքում		Տղամարդու դեպքում	
	Թիրախային բնակավայրեր	Ծրագրի շահառուներ	Թիրախային բնակավայրեր	Ծրագրի շահառուներ
Համապատասխանկրթություն	94%	85%	93%	86%
Կառավարմանհմտություններ	97%	100%	97%	99%
Ծանոթություններ, կապեր	55%	56%	62%	59%
Հաղորդակցությանհմտություններ	99%	98%	98%	98%
Արտաքինտեսք	66%	49%	51%	41%
Լեզուներիիմացություն	92%	89%	91%	88%
Համակարգչայինգիտելիքներ	96%	94%	95%	94%
Աշխատանքայինփորձ	77%	71%	77%	70%
Ամուսնացածչլինելը	10%	4%	4.0%	2.0%
Ֆինանսականմիջոցներ	41%	39%	44%	39%

Համայնքապետ կամ ավագանու անդամ դառնալու դեպքում կնոջ և տղամարդու համար կարևոր բնութագրիչները հասկանալուց հետո դիտարկել ենք, թեորոնք են այն դրդապատճառները, հանուն որոնց կինը կամ տղամարդը ցանկանում են դառնալ համայնքապետ կամ ավագանու անդամ, և արդյոք այդ դրդապատճառները տարբեր են՝ կախված սեռից:

Ըստ հանրային ընկալումների՝կինը ցանկանում է զբաղեցնել ՏԻՄ պաշտոն, որպեսզի մարզպետարանում կամ կառավարությունում պաշտպանի համայնքի խնդիրները(**Աղյուսակ 26**):

Կնոջ՝ համայնքապետ կամ ավագանու անդամ դառնալու դրդապատճառները տարբերվում են այն հարցվողների մոտ, որոնք Ծրագրի անմիջական մասնակիցներն են: Օրինակ՝ եթե բնակիչների 61%-ի կարծիքով կանայք զբաղեցնում են ՏԻՄ պաշտոն, որպեսզի իշխանություն ունենան, ապա ԾԹԲ-ների և ԾՇ-ների 35% և 31%-ն է այդպես կարծում (**Աղյուսակ 28**): Վերջիններս դրականորեն տարբերվում են իրենց ընկալումներով նաև այն հարցերի շուրջ, թեկանայք ՏԻՄ պաշտոն են զբաղեցնում կարիերա անելու կամ ֆինանսական միջոցներ տնօրինելու համար: Ծրագրի միջոցառումներին և գործողություններին ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունեցած ԾԹԲ-ները և ԾՇ-ներն առավել հակված են մտածելու, որ կնոջ դեպքում համայնքապետ կամ ավագանու անդամ դառնալու հարցում առաջնային դրդապատճառներ են համայնքի խնդիրները մարզպետարանում կամ կառավարությունում պաշտպանելը, համայնքի առաջնահերթ խնդիրները լուծելը, համայնքում կայացված որոշումների իրականացումը վերահսկելը:

Աղյուսակ 26 - Համայնքապետ կամ ավագանու անդամ դառնալու դրդապատճառները կնոջ դեպքում(բնակիչներ)

Դրդապատճառներ	2019	2021
Իշխանությունունենալը	60%	61%
Համայնքումորոշումներկայացնելունմասնակցելը	74%	72%
Վերահսկելուհամարհամայնքումկայացվածորոշումներիիրականացումը	72%	69%
Կարիերաանելը	75%	75%
Ֆինանսականմիջոցներիտնօրինելը	64%	66%
Համայնքիխնդիրներըմարզպետարանումկամկառավարությունումպաշտպանելը	73%	78%
Համայնքիառաջնահերթխնդիրներըլուծելը	79%	80%
Համայնքումկոռուպցիան և հովանավորչությունըվերացնելուհամար	71%	70%
Կանանցիրավունքներըպաշտպանելուհամար	86%	87%

Տղամարդկանց պարագայում ցուցանիշները փոխվել են հատկապես երկու դրդապատճառների դեպքում՝ իշխանություն ունենալ (+7%) և տնօրինել ֆինանսական միջոցները (+9%)(**Error! Not a valid bookmark self-reference.**): Մյուս կողմից, հանրությունն այժմ ավելի քիչ է մտածում, որ տղամարդիկ ցանկանում են ՏԻՄ-ում որևէ պաշտոն ունենան, որպեսզի համայնքում վերացնեն կոռուպցիան և հովանավորչությունը(-7%) կամ պաշտպանեն կանանց իրավունքները (-7%):

Աղյուսակ 27 - Համայնքապետ կամ ավագանու անդամ դառնալու դրդապատճառները տղամարդու դեպքում(բնակիչներ)

Դրդապատճառներ	2019	2021
Իշխանությունունենալը	76%	82%
Համայնքումորոշումներկայացնելունմասնակցելը	81%	83%
Վերահսկելուհամարհամայնքումկայացվածորոշումներիիրականացումը	77%	77%
Կարիերաանելը	78%	79%
Ֆինանսականմիջոցներիտնօրինելը	72%	78%
Համայնքիխնդիրներըմարզպետարանումկամկառավարությունումպաշտպանելը	76%	81%
Համայնքիառաջնահերթխնդիրներըլուծելը	81%	82%
Համայնքումկոռուպցիան և հովանավորչությունըվերացնելուհամար	67%	62%
Կանանցիրավունքներըպաշտպանելուհամար	53%	49%

Աղյուսակ 28 - Համայնքապետ կամ ավագանու անդամ դառնալու դրդապատճառները կնոջ և տղամարդու դեպքում ըստ թիրախային բնակավայրերի և Ծրագրի շահառուների

Բնութագրիչներ	Կնոջ դեպքում		Տղամարդու դեպքում	
	Թիրախային բնակավայրեր	Ծրագրի շահառուներ	Թիրախային բնակավայրեր	Ծրագրի շահառուներ
Իշխանությունունենալը	35%	31%	76%	77%
Համայնքումորոշումներկայացնելունմասնակցելը	86%	85%	92%	84%
Վերահսկելուհամարհամայնքումկայացվածորոշումներիիրականացումը	80%	80%	81%	79%
Կարիերաանելը	56%	54%	65%	67%
Ֆինանսականմիջոցներիտնօրինելը	44%	40%	59%	63%
Համայնքիխնդիրներըմարզպետարանումկամկառավարությունումպաշտպանելը	93%	84%	86%	76%
Համայնքիառաջնահերթխնդիրներըլուծելը	95%	98%	88%	88%

Համայնքումկոռուպցիան և հովանավորչությունը վերացնելուհամար	84%	85%	77%	71%
Կանանցիրավունքներըպաշտպանելուհամար	96%	92%	38%	36%

Առանձնակի ուշադրության են արժանի այն տվյալները, թե ովքեր պետք է որոշում կայացնեն կնոջ՝ համայնքապետ կամ ավագանու անդամ դառնալու հարցի շուրջ: Դիտարկվել է 4 տարբերակ. կինն ինքը, կնոջ ընտանիքի անդամը/ները, կնոջ շրջապատը՝ ընկերները, գործընկերները, և համայնքի ղեկավարը: **Այս հարցի շուրջ հանրային ընկալումներում տեղի են ունեցել շեշտակի փոփոխություններ: Աճել է կնոջ՝ ինքնուրույն որոշում կայացնելու ցուցանիշը, և նվազել է կնոջ՝ սոցիալ-մշակութային միջավայրի կողմից որոշումներ կայացնելու ցուցանիշը:** Հատկապես փոխվել է այս հարցի շուրջ շրջապատի ունեցած դերի ցուցանիշը՝ իջնելով 13%-ով: Ընտանիքի անդամների և համայնքի ղեկավարի կողմից որոշում կայացնելու ցուցանիշներն իջել են համապատասխանաբար 14% և 9%-ով:Իսկ այն հարցի շուրջ, որ կինն ինքը պետք է որոշում կայացնի արդյոք ուզում է դառնալ համայնքի ղեկավար կամ ավագանու անդամ, ցուցանիշն աճել է 6%-ով:Կնոջ՝ ինքնուրույն որոշում կայացնելու ցուցանիշները բարձր են հատկապես ԾԹԲ-ների և ԾԾ-ների շրջանում: Հանրության այս հատվածի 99%-ը գտնում է, որ համայնքապետ կամ ավագանու անդամ դառնալու որոշումը պետք է կայացնի կինն ինքը(**Գծապատկեր 15**): Կարծում ենք, որ ընկալման նման ցուցանիշները շատ կարևոր են և կարող են ունենալ էական ազդեցություն՝ հանրության այլ շերտերի ընկալումների փոփոխության համար ևս:

Գծապատկեր 14 - Կնոջ՝ համայնքապետ կամ ավագանու անդամ դառնալու հարցում որոշում կայացնողները(բնակիչներ)



*- Բազմակի պատասխանների հնարավորություն

Գծապատկեր 15 - Կնոջ՝ համայնքապետ կամ ավագանու անդամ դառնալու հարցում որոշում կայացնողներն ըստ թիրախային բնակավայրերի և Ծրագրի շահառուների



*- Բազմակի պատասխանների հնարավորություն

Կնոջ՝ ինքնուրույն որոշում կայացնելու և սոցիալական միջավայրի կարծիքներից անկախ լինելու ընկալումներում ակնհայտ են տարիքային գործոնով պայմանավորված փոփոխությունները: Այդ փոփոխություններն ակնհայտ են առավել ցածր տարիքային խմբերում՝ 18-37տտ: **Որքան ցածր է անձի տարիքը (18-25տտ), այնքան բարձր է կնոջ՝ ինքնուրույն որոշում կայացնելու վերաբերյալ ունեցած կարծիքի ցուցանիշը**:

3.4 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՄ-ԵՐՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Հայաստանում համայնքների խոշորացման(այսուհետ՝ ՀԽ) գործընթացի վերաբերյալ տեսակետները խիստ տարբերվում են: Մի խումբ տեսակետների համաձայն այն անհրաժեշտ գործընթաց էր, որի արդյունքում հնարավոր կլինի իրականացնել սոցիալ-տնտեսական, վարչական ծախսերի կրճատում, մյուս խումբ տեսակետի համաձայն այն հանգեցնում/նելու է գործազրկության, մշակութային անհամատեղելիության, ռեսուրսների ոչ համաչափ բաշխման և այլ խնդիրների: Չխորանալով այս և նմանատիպ հիմնախնդիրների նրբերանգների մեջ՝ անդրադառնանք միայն ՀԽ-ի ունեցած ազդեցությանը՝ կանանց՝ համայնքում ներգրավվածության, ավագանիում թվի փոփոխության և դրանք պայմանավորող գործոնների քննությանը:

Առաջին տեսանկյունը, որը դիտարկել ենք, այն է, թե արդյոք ՀԽ-ն դրական է ազդել որոշումների կայացման մակարդակում կանանց ներկայացվածության վրա:Պարզվում է, որ այս հարցում հանրային ընկալումներում գրեթե փոփոխություններ չեն եղել և շարունակում են մնալ բացասական: (**Գծապատկեր 16**):ՀԽ-ների ունեցած ոչ դրական ազդեցության վերաբերյալ կարծիքը որոշումների կայացման մակարդակումկանանց ներկայացվածության վրա բնութագրական է հանրության բոլոր շերտերին, ինչպես բնակիչներին, այնպես էլ ԾԹԲ-ներին և ԾԾ-ներին (**Գծապատկեր 17**): Կարծում ենք, որ սա կարևոր ցուցանիշ է և պետք է հաշվի առնվի ՀԽ գործընթացներում, ինչպես նաև խոշորացված համայնքներում պետական, միջազգային և մասնավոր կազմակերպությունների կողմից իրականացվողգենդերային ուղղվածություն ունեցող ծրագրերի շրջանակներում:

Գծապատկեր 16 - Համայնքների խոշորացումը դրական է ազդել որոշումների կայացման մակարդակումկանանց ներկայացվածության վրա(բնակիչներ)



*- Պատասխաններում ներառված չեն դժվարանում է պատասխանել և չգիտի տարբերակները

Գծապատկեր 17 - Համայնքների խոշորացումը դրական է ազդել որոշումների կայացման մակարդակում կանանց ներկայացվածության վրա ըստ թիրախային համայնքների և Ծրագրի շահառուների



*- Պատասխաններում ներառված չեն դժվարանում է պատասխանել և չգիտի տարբերակները

Վերը թվարկված իրավիճակում, երբ խոսքը գնում էր, ընդհանուր առմամբ, կանանց ներկայացվածության մասին, հանրային ընկալումներում որևէ փոփոխություն չէր եղել: Սակայն, ավագանիներում կանանց մասնակցության հարցի վերաբերյալ ինչպես՝բնակիչների, այնպես էլ՝ԾԹԲ-ների և ԾԾ-ների կարծիքով համայնքների խոշորացման գործընթացը **զգալի ազդեցություն է ունեցել ավագանիներում կանանց թվի նվազեցման վրա**: (**Գծապատկեր 168 և19**):

Գծապատկեր 18 - Համայնքների խոշորացումից հետո կանանց թվի փոփոխությունն ավագանիում(բնակիչներ)



*- Պատասխաններում ներառված չեն դժվարանում է պատասխանել և չգիտի տարբերակները

Գծապատկեր 19 - Համայնքների խոշորացումից հետո կանանց թվի փոփոխությունն ավագանիում ըստ թիրախային բնակավայրերի և Ծրագրի շահառուների



*- Պատասխաններում ներառված չեն դժվարանում է պատասխանել և չգիտի տարբերակները

Իսկ որոնք են այն գլխավոր պատճառները, որոնք նպաստում են ՀԽ-ից հետո ավագանիներում կանանց թվի նվազմանը:Պարզվում է, որ կանայք չունեն խոշորացված համայնքում իրենց ներկայացնելու հնարավորություն, ինչի պատճառով էլ վերջին երկու տարիների ընթացքում կանանց թիվն ավագանիում նվազել է: Երրորդ ցուցանիշը, որն աճել է +4%-ով, այն է, որ տղամարդկանց հետ մրցակցությունը դարձել է ավելի սուր:

Նշենք մի կարևոր փաստ՝ հանրության այն հատվածը, որն ունեցել է որևէ մի ազդեցություն Ծրագրի կողմից, առավել սուր կարծիք ունի ՀԽ-ներից հետո կանանց թվի նվազման պատճառների մասին: Այդ թվում, նրանց մոտ առավել արտահայտված է այն կարծիքը, որ ՀԽ-ներից հետո տղամարդկանց հետ մրցակցությունն ավելի դժվարացել է կանանց համար, բացակայում են համայնքում ինքն իրեն ներկայացնելու հնարավորությունը և որ ԽՀ-ներում կանայք ճանաչված չեն (**Աղյուսակ 3**): Կարելի է ենթադրել, որ հանրության այդ հատվածն առավել տեղեկացված է և առավել խորքային է պատկերացնում խնդրի նրբությունները և իրավիճակը:

Աղյուսակ 33- Համայնքների խոշորացումից հետո ավագանիներում կանանց թվի նվազման պատճառները

Պատճառներ	2019	2021	Թիրա-խային բնակա-վայրեր	Ծրագրի շահա-ռուներ
Տղամարդկանցհետմրցակցությունընդարձել է ավելիսուր	52%	54%	79%	65%
Համայնքումինքնիրեններկայացնելուհնարավորությանբացակայությանը	49%	54%	63%	65%
Ընտրությունըկատարվում է ոչմիայնիրհամայնքիբնակիչներիկողից, այլ՝ խոշորացվածհամայնքի	64%	63%	95%	83%
Խոշորացվածհամայնքումչճանաչվածլինելուպատճառով	76%	77%	95%	91%

Նախապատվությունընտրվել է տղամարդկանց	76%	73%	74%	57%
Նախընտրականծրագրիբացակայությանպատճառով	46%	54%	21%	22%
Դժվար. է պատասխ.	2%	1%	0%	0%

3.4.1 Համայնքում որոշումների կայացման մակարդակումկանանց ներգրավվածության աստիճանի փոփոխությունը

ՀԽ, պատերազմ, համավարակ, այլ գործոններ, թե՞ ուղղակի սոցիալ-մշակութային կարծրատիպային միջավայր, ինչևէ, փաստն այն է, որ ըստ հանրային ընկալումների, վերջին 5 տարիների ընթացքում համայնքներում նվազել է կանանց՝ որոշումների կայացման մակարդակում ներգրավվածության աստիճանը (Գծապատկեր 20): Հետաքրքիր է, որ այս հարցի շուրջ բավականին տարբեր է ԾԹԲ-ների և ԾԾ-ների շրջանում: ԾԹԲ-ների 3%-ն է կարծում, որ որոշումների կայացման մակարդակումկանանց ներգրավվածության աստիճանը նվազել է, իսկ ԾԾ-ների՝ 17%-ը(Գծապատկեր 21):

Գծապատկեր 20 - Վերջին 5 տարիներին համայնքում որոշումների կայացման մակարդակումկանանց ներգրավվածության աստիճանը(բնակիչներ)



*- Պատասխաններում ներառված չեն դժվարանում է պատասխանել և չգիտի տարբերակները

Գծապատկեր 21 - Վերջին 5 տարիներին համայնքում որոշումների կայացման մակարդակումկանանց ներգրավվածության աստիճանն ըստ թիրախային բնակավայրերի և Ծրագրի շահառուների



* - Պատասխաններում ներառված չեն դժվարանում է պատասխանել և չգիտի տարբերակները

Ինչպես հարցերի մեծամասնության դեպքում, այս հարցի պարագայում ևս, կանանց ներգրավվածության աճի մասին խոսում են տղամարդիկ, իսկ նվազման մասին՝ կանայք(Աղյուսակ 4): Միգուցե կանանց փոքր-ինչ ներգրավվածության աճն առավել տեսանելի է տղամարդկանց համար, քանի որ սովոր չեն կանանց տեսնել համայնքում որոշումների կայացման մակարդակում:

Աղյուսակ 34- Վերջին 5 տարիներին համայնքում որոշումների կայացման մակարդակում կանանց ներգրավվածության աստիճանն ըստ սեռի(բնակիչներ)

Ներգրավվածության աստիճանը	2019		2021	
	Ար	Իգ	Ար	Իգ
Նվազել է	8%	8%	11%	11%
Մնացել է նույնը	36%	34%	30%	28%
Աճել է	33%	37%	40%	38%

3.5 ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Ինչ քայլերի է պատրաստ հանրությունը՝ փոխելու կանանց ներգրավվածությունը ՏԻՄ-երում և ոչ միայն: Բոլորս պարբերաբար խոսում ենք այդ հարթությունում առկա կարծրատիպերի, անհավասարության մասին, սակայն ինչ ենք անում՝ առկա իրավիճակը փոխելու և ավելի լավը դարձնելու ուղղությամբ: Այս հարցերի պատասխանները ստանալու համար՝ դիտարկել ենք հանրության քաղաքական և քաղաքացիական ակտիվությունը:

Պետք է արձանագրել, որ վերջին 2 տարիներին բարձրացել է հանրության քաղաքացիական ակտիվությունը: Հանրությունն այժմ ավելի պատրաստ է մասնակցելու միջոցառումների, որոնք ուղղված են կանանց դերի բարձրացմանը համայնքում (1% ցուցանիշի աճ), ինչպես նաև ավելի վստահ է, որ կարող է նպաստել, որպեսզի համայնքում մեծանա կանանց ներգրավվածության աստիճանը համայնքի կառավարման հարցերում (4% ցուցանիշի աճ)(**Աղյուսակ 5**):Սակայն, տեսական հարթությունում ընկալման նման փոփոխության կողքին շարունակում են խիստ արդիական մնալ կարծրատիպային ընկալումները կանանց՝ ՏԻՄ-ում ներգրավվելու կամ ներգրավվածության դեպքում ունեցած դժվարությունների մասին: Չնայած հանրության մի զգալի զանգված տեսնում է իր դերն իրենց համայնքում կանանց դերի բարձրացման հարցում, սակայն, միաժամանակ կարողանում է գնահատել առկա մշակութային սովորույթները, մտածելակերպը, որոնք թույլ չեն տալիս կանանց ներգրավվածության աստիճանի բարձրացմանը: Ընդ որում, հանրային ընկալումներում այս և կանանց պաշտոնավարման ժամանակ և նախընտրական փուլերում ճնշումներին ենթարկվելու ցուցանիշներն ամենից շատ են փոփոխության ենթարկվել՝ արձանագրելով6%աճ:Դժվար կլինի գնահատել արդյոք այս կարծիքի ձևավորման պատճառը փաստերն են, թե ուղղակի ենթադրությունները, թե երկուսն էլ միասին, սակայն այն կարող է լրջագույն դեր ունենալ կանանց՝ որևէ պաշտոն զբաղեցնելու հարցում: Դրա մասին (և ոչ միայն) արդեն իսկ խոսում են փաստերը՝2%-ով իջել է հանրության՝ որպես համայնքի ղեկավար կամ ավագանու անդամ առաջադրվելու ցանկությունը:

Ակնհայտ տարբերություններ կան հանրության քաղաքական և քաղաքացիական ակտիվության հարցերում, երբ այն դիտարկում ենք ըստ բնակիչների և ըստ ԾԹԲ-ների ու ԾԾ-ների: Վերջինների շրջանում առավել բարձր է ակտիվությունը, երբ խոսքը գնում է համայնքում կառավարման հարցերում կանանց ներգրավվածության բարձրացմանը նպաստելուն, համայնքում կանանց դերի բարձրացմանն ուղղված միջոցառումների մասնակցելուն և համայնքի ղեկավար և/կամ ավագանու անդամ առաջադրվելուն: Մյուս կողմից հանրության այն մասը, որն ունեցել է որևէ մասնակցություն Ծրագրին, պակաս կարծրատիպային ընկալումներ ունի այն հարցերում, որ սովորույթները, կարծրատիպերը, մտածելակերպը խանգարում են կանանց ներգրավվածության բարձրացմանը կամ այն, որ կանանց ներգրավվածությունը ՏԻՄ-ում ավելի հեշտ է քաղաքային համայնքներում, քան՝ գյուղական:

Աղյուսակ 35- Հարցվողների քաղաքական և քաղաքացիական ակտիվությունը(բնակիչներ, ԾԹԲ, ԾԾ)

Ձևակերպումներ	2019	2021	Թիրա-խային բնակա-վայրեր	Ծրագրի շահա-ռուներ
Եսկարողեմնպաստել, որպեսզիիմիամայնքումմեծանականանցներգրավվածությունըհամայնքիկառավարմանհարցերում	42%	46%	87%	89%
Եսկմասնակցեմմիջոցառումների, որոնքուղղվածենկանանցդերիբարձրացմանըհամայնքում	62%	63%	91%	98%
Մերհամայնքումերբեքչիբարձրանականանցներգրավվածությանաստիճանը ՏԻՄ-ում, քանիորդրանկխանգարենձևավորվածսովորույթները, կարծրատիպերը, մտածելակերպը	43%	49%	27%	22%
Կանանցներգրավվածությունը ՏԻՄ-ումավելիհեշտ է քաղաքայինհամայնքներում, քան՝ գյուղական	77%	77%	59%	67%
Կանայքճնշումներիենենթարկվումպաշտոնավարմանժամանակ և նախընտրականփուլերում	42%	48%	32%	42%
Եսուզումեմառաջադրվելորպեսհամայնքիղեկավար/ավագանուանդամ	14%	12%	32%	41%

3.6 ԿԱՆԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ ՏԻՄ-ՈՒՄ ՈՐԵՎԷ ԸՆՏՐՈՎԻ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին տարիների ընթացքում իրականացվել են բազմաթիվ ծրագրեր և միջոցառումներ, որոնք միտված են եղել կանանց տնտեսական զորացմանը, քաղաքացիական և քաղաքական ակտիվության բարձրացմանը: Փաստ է որ այդ տիպի ծրագրերը և միջոցառումներն ունեցել են նշանակալի ազդեցություն իրենց անմիջական մասնակիցների շրջանում: Սույն հետազոտության արդյունքներով, ՏԻՄ-ում որևէ ընտրովի պաշտոն զբաղեցնելու ցանկությունն ավելի բարձր է ԾԹԲ-ների և ԾՇ-ների շրջանում: 2021 թ. տվյալներով կին բնակիչների 9%-ն է ցանկանում զբաղեցնել որևէ պաշտոն, իսկԾՇ-ների և ԾԹԲ-ների և՝ 27%-43%-ը (
Աղյուսակ 29):

Աղյուսակ 296 - ՏԻՄ-ում որևէ ընտրովի պաշտոն զբաղեցնելու կանանց ցանկությունը

ՏԻՄ պաշտոններ	2019	2021	Թիրախային բնակավայրեր	Ծրագրի շահառուներ	Բնակավայրեր, որտեղ կան ավագանու կին անդամներ
Համայնքապետ	3%	3%	11%	5%	4%
Ավագանուանդամ	9%	6%	32%	22%	9%
Ե'վհամայնքապետ, և' ավագանուանդամ	5%	3%	1%	17%	3%
Չենցանկանումզբաղեցնելորևէպաշտոն	83%	88%	54%	55%	83%
Դժվար. է պատասխանել	-	-	1%	0%	1%

Իսկ որոնք են այն հիմնական պատճառները, որ կանանց մոտ նվազել է ՏԻՄ-ում որևէ ընտրովի պաշտոն զբաղեցնելու ցանկությունը:Բնակիչների շրջանում գլխավոր 2 պատճառները, որոնց ցուցանիշներն ամենից շատն են աճել վերջին 2 տարիների ընթացքում, մշակութային գործոններն են, ի թիվս հասարակության արգելքի և կին լինելու (+2%) (**Աղյուսակ 7**): Կարելի է եզրակացնել, որ կանայք դեռ բավարար չափով ինքնուրույն և կայացած չեն այս հարցում, այդ իսկ պատճառով այդքան շատ կարևորում են հասարակության արգելքը: Մյուս կողմից, փաստորեն, սեռով պայմանավորված գործոնը դեռ շարունակում է ունենալ իր ուրույն դերը: Միայն այն հանգամանքը, որ կին ես, արդեն իսկ խոչընդոտ է համարվում ՏԻՄ-ում պաշտոն զբաղեցնելու համար: Սակայն, այս ընկալումներն արմատական են այն հարցվողների շրջանում, որոնք չեն հանդիսանում Ծրագրի շահառուներ: Մինչդեռ ԾԹԲ-ների և ԾՇ-ների շրջանում այս ընկալումը շատ ավելի թույլ է արտահայտված: Ծրագրի արդյունքում մի կողմից կանանց մոտ հաղթահարվել է մշակութային գործոններով պայմանավորված այնպիսի խոչընդոտներ, ինչպիսիք են՝ կին լինելը և հասարակության արգելքը: Մյուս կողմից, Ծրագրին որևէ մասնակցություն ունեցած կանայք դարձել են ավելի չհանձնվող՝ չմտածելով, որ չընտրվելը կարող է հիմք հանդիսանալ իրենց հանդեպ ունեցած հարգանքի կորստի, և դարձել են հասարակական կարծիքից առավել պակաս կախվածություն ունեցող:

Կանանց համար նշվածներից մյուս կարևոր գործոնը «համապատասխան կրթություն և գիտելիք» չունենալն է, որը փոփոխվել/ ավելացել է 3%, որը խոսում է կանանց իրենց գիտելիքի և կարողությունների նկատմամբ անհավատ վերաբերմունքի մասին, բայցև՝ առաջին հերթին, կանանց պատասխանատվության մակարդակի:

Աղյուսակ 37- ՏԻՄ-ում որևէ ընտրովի պաշտոն զբաղեցնելու հարցում կանանց ցանկության բացակայության պատճառները(բնակիչներ, ԾԹԲ, ԾՇ)

Պատճառներ	2019	2021	Թիրախային բնակավայրեր	Ծրագրի շահառուներ
Չունեմհամապատասխանկրթություն և գիտելիք	51%	54%	27%	15%
Կնոջըհարիրաշխատանքչէ	22%	22%	8%	2%
Կինլինելը	22%	24%	10%	6%
Ցանկությունչունեմ	85%	86%	94%	85%

Ընտանիքիանդամըարգելում է կամհամաձայնչէ	25%	25%	18%	11%
Չընտրվելուպարագայումունեմհարգանքիկորստիվախ	16%	16%	10%	6%
Հասարակությունըարգելք է հանդիսանում	12%	14%	12%	4%
Ժամանակպահանջողաշխատանք է, ընտանիքիհետհամատեղելիչէ	59%	54%	57%	35%
Չունեմծանոթություններ, կապեր	39%	35%	20%	7%
Չունեմֆինանսականմիջոցներ	44%	41%	18%	15%
Ունեմառողջականխնդիրներ	40%	43%	33%	17%
Տարիքիպատճառով	48%	50%	47%	33%

Չնայած նրան թե ՏԻՄ-ում որևէ ընտրովի պաշտոն զբաղեցնելու կանանց ցանկությունը վերջին 2 տարիների ընթացքում նվազել է, այնուամենայնիվ, կանանց մոտ4% բարձրացել էհամայնքի բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակը բարելավվելու ցուցանիշը: Այս ցուցանիշի բարձրացումը խոսում է այն մասին, որ չնայած առկա կարծրատիպին, համաձայն որի՝ կանայք առավել ճիշտ գործունեություն են կարողանում ծավալել մշակույթի, տուրիզմի, կրթության, երիտասարդներին վերաբերվող ոլորտներում, կանայք իրենց տեսնում են սոցիալ-տնտեսական ոլորտի բարելավման մեջ: Ավելին, այդ ցուցանիշը գնալով բարձրանում է:

Հաջորդ պատճառը, որի ցուցանիշը վերջին 2 տարիների ընթացքում աճել է (+4%) այն է, որ կանայք ցանկանում են իրենց ունեցած գիտելիքներն ու հնարավորությունները կիրառել՝ համայնքում դրական փոփոխություններ իրականացնելու համար: (**Աղյուսակ** 38**38**):

Աղյուսակ 38 - ՏԻՄ-ում որևէ ընտրովի պաշտոն զբաղեցնելու հարցում կանանց ցանկության պատճառները(բնակիչներ, ԾԹԲ, ԾՇ)

Պատճառներ	2019	2021	Թիրախա-յին բնակավայ-րեր	Ծրագրի շահառու-ներ
Իմհամայնքիբնակիչներիսոցիալ-տնտեսականվիճակըբարելավվելուհամար	95%	99%	100%	100%
Կանանց և տղամարդկանցմիջևանհավասարությունը վերացնելուհամար	86%	81%	88%	82%
Իմգիտելիքներնուհնարավորություններըկիրառելուհամար	92%	96%	98%	98%
Համայնքումբարձրդիրքունենալուհամար	49%	46%	38%	25%
Համայնքապետիգործունեությաննկատմամբվերահսկողությունիրականացնելուհամար	70%	70%	55%	75%

3.7 ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԿԱՐԾԻՔԸ ՏԻՄ-ՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տեսնենք թե ինչ դիրքորոշում ունեն այդ ՏԻՄ –ում կանանց մասնակցության մասին տղամարդիկ[2]: Արդյոք ցանկանում են, որպեսզի ՏԻՄ-երում մեծանա կանանց մասնակցությունը, թե՝ ոչ: Պարզվում է, որ տղամարդիկ նման փոփոխության պատրաստ են: (**Գծապատկեր 22**):

[2]Այս հարցի շուրջ չեն ներկայացվել ԾԹԲ-ների և ԾՇ-ների կարծիքը, քանի որ շատ փոքր թիվ են կազմում և ներկայացուցչական չեն:

Գծապատկեր 22 - Տղամարդկանց ցանկությունը, որպեսզի ՏԻՄ-ում մեծանա կանանց մասնակցությունը(բնակիչներ)



*- Պատասխաններում ներառված չեն դժվարանում է պատասխանել և չգիտի տարբերակները

Սակայն, տղամարդկանց պատրաստակամությունը ՏԻՄ-ում տեսնել իրենց ընտանիքի կին անդամի ցավոք իջել է 8 կետով:

Գծապատկեր 23 - Տղամարդկանց ցանկությունը, որպեսզի ՏԻՄ-ում մեծանա իրենց ընտանիքի կին անդամների մասնակցությունը(բնակիչներ)



* - Պատասխաններում ներառված չեն դժվարանում է պատասխանել և չգիտի տարբերակները

Ցուցանիշի փոփոխության հարցում նկատելի է բնակավայրով պայմանավորված տարբերություններ: ՏԻՄ-երում կանանց մասնակցության բարձրացման առավել հակված են քաղաքային բնակավայրերում բնակվող տղամարդիկ(+3% աճ), քան՝ գյուղական (-1% նվազում):

Հետաքրքիր է, որ ՏԻՄ-երում կանանց մասնակցության բարձրացման ցուցանիշի աճն ակնառու է քաղաքացիական ամուսնություն ունեցող տղամարդկանց շրջանում, երկրորդ տեղում ցուցանիշի աճ գրանցվել է կնակորույս տղամարդկանց շրջանում, իսկ ամուսնացածների մոտ աճը կազմում է +3%: Ամենից ցածր դրական աճ գրանցվել է ամուրի տղամարդկանց մոտ՝ +1%: ՏԻՄ-երում կանանց մասնակցության բարձրացմանը սկսել են դեմ լինել ամուսնալուծված տղամարդիկ՝ -4%: Հավանաբար, ընտանեկան հարաբերություններում ունեցած անհաջողությունները վերջիններիս կողմից տարածվում է նաև քաղաքականության մեջ կանանց գործունեության վրա:

Փաստորեն, տղամարդկանց ընկալումներում փոփոխություններն առավել հնարավոր են դառնում, երբ խոսքը վերաբերվում է երևույթին՝ առավել ընդհանրական առումով: Մինչդեռ, այդ նույն փոփոխություններն ընտանիքում տեղի են ունենում դժվարությամբ, քանի որ խոսքը գնում է այնպիսի ինստիտուտի մասին, որ վերաբերյալ ընկալումներն ունեն հաբիթուալ բնույթ, առավել կարծրացած են և ոչ պատրաստ փոփոխությունների:

3.8 ՊԱՏԵՐԱԶՄԸ, ՀԱՄԱՎԱՐԱԿԸ ԵՎ ԿԱՆԱՅՔ

Վերջին 1-2 տարիների ընթացքում Հայաստանում տեղի ունեցան երկու կարևորագույն իրադարձություններ, որոնք իրենց հետքը թողեցին մարդու կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտների վրա:Խոսքըվերաբերվում է համավարակին (քովիդ) և արցախյան 2-րդ պատերազմին:

Չխոսելովմնացածոլորտներումտեղիունեցածփոփոխությունների մասին՝ անդրադառնանք, թեըստ հանրային ընկալումների՝ արդյոք պատերազմն ու համավարակն ունեցել են որևէ բացասական ազդեցություն՝ ավագանու կին անդամների՝ իրենց պարտականություններն իրականացնելու հարցում:**Այսպես, հանրության 31%-ը գտնում է, որ և՛ համավարակը, և՛ պատերազմն ունեցել են որևէ ազդեցություն**(**Գծապատկեր 24**): Ընդ որում, առանձին վերցրած, պատերազմի և համավարակի մասին հանրությունը նշել է նույն տոկոսային համադրությամբ:**Հանրությունն առավել շատ (43%)մտածում է, որ պատերազմն ու համավարակը չեն ունեցել որևէ ազդեցություն ավագանու կին անդամների՝ իրենց պարտականությունների իրականացման վրա**: Կարծում ենք, որ այս տվյալները խոսում են նաև այն մասին, որ որպես հանրային ծառայող, կանայք նույնպես ուժեղ են, ամուր, և արտաքին գործոնները չեն ազդում նրանց պարտականությունների կատարման վրա:Այս կարծիքը հիմնավոր է դառնում, երբ այն դիտարկում ենք Ծրագրի մասնակից կանանց շրջանում: Այն որ համավարակն ու պատերազմը չեն ունեցել որևէ ազդեցություն ավագանու կին անդամների պարտականությունների կատարման վրա՝ վստահ են ԾԹԲ-ների 80%-ը, իսկ ԾՇ-ների՝ 86%-ը(**Գծապատկեր 25**):

Գծապատկեր 24 - Պատերազմի և համավարակի բացասական ազդեցությունը՝ ավագանու կին անդամների պարտականությունների իրականացման վրա(բնակիչներ)



Գծապատկեր 25 - Պատերազմի և համավարակի բացասական ազդեցությունը՝ ավագանու կին անդամների պարտականությունների իրականացման վրա ըստ թիրախային բնակավայրերի և Ծրագրի շահառուների



Սակայն, երբ արդեն քննարկում ենք այն հարցը, թե ինչ բացասական ազդեցություն են ունեցել պատերազմն ու համավարակը որոշումների կայացման մակարդակում կանանց ներկայացվածության վրա՝ պատկերը փոխվում է: Պարզվում է, որ այդ հարթությունում փոփոխություններն առավել ակնհայտ են: Հանրության կեսից ավելին (54%) կարծում է, որ համավարակն ու պատերազմը բացասական ազդեցություն են ունեցել որոշումների կայացման մակարդակում կանանց ներկայացվածության վրա (**Գծապատկեր 26**): Սակայն, Ծրագրի մասնակից կանայք, համեմատ բնակիչների, այս հարցում ևս

Գծապատկեր 26 - Պատերազմի և համավարակի բացասական ազդեցությունը որոշումների կայացման մակարդակումկանանց ներկայացվածության վրա(բնակիչներ)



առավել վստահ են, որ այդ իրադարձություններըպակաս ազդեցություն են ունեցել որոշումների կայացման մակարդակումկանանց ներկայացվածության վրա (Գծապատկեր 27): Հավանաբար, նման կարծիքի ձևավորման հիմքում սեփական փորձն է:

Գծապատկեր 27 - Պատերազմի և համավարակի բացասական ազդեցությունը որոշումների կայացման մակարդակումկանանց ներկայացվածության վրա ըստ թիրախային բնակավայրերի և Ծրագրի շահառուների



Բնակիչների շրջանում, կանայք ավելի շատ են մտածում, որ պատերազմն ու համավարակը բացասական ազդեցություն են ունեցել որոշումների կայացման մակարդակում կանանց ներկայացվածության վրա(Աղյուսակ 3930**39**): Հավանաբար, պատճառներից մեկն այն է, որ կանայք դատում են՝ հիմքում ունենալով իրենց զգացողությունները: Մինչդեռ տղամարդիկ հարցին մոտենում են ընդհանրական առումով՝ կարևորելով կնոջ ոչ թե սեռային պատկանելիությունը, այլ՝ համամարդկայինարժեքները:

Աղյուսակ 3930 - Պատերազմի և համավարակի բացասական ազդեցությունը որոշումների կայացման մակարդակում կանանց ներկայացվածության վրա ըստ սեռի(բնակիչներ)

Իրավիճակներ	Ար	Իգ
Պատերազմը	3%	3%
Համավարակը	1%	1%
Երկուսնէլ	48%	56%
Չենունեցելազդեցություն	43%	34%
Դժվար. է պատասխ.	6%	6%
Հրաժ. է պատասխ.	0%	0%
Ընդամենը	**100%**	**100%**

Այս հարցի շուրջ ակնհայտ է տարիքային գործոնով պայմանավորված տարբերություններ՝ **որքան բարձր է հարցվողների տարիքը, այնքան ավելի շատ են մտածում, որ պատերազմն ու համավարակը բացասական ազդեցություն են ունեցել որոշումների կայացման մակարդակումկանանց ներկայացվածության վրա**(Աղյուսակ 4031**40**): Եվ հակառակը, այդ ընկալումնիջնում է հարցվողների տարիքի նվազմանը զուգահեռ: Այս հարցի շուրջ կարելի է անել երկու հիմնական հետևություն՝ որքան բարձր է անձի տարիքը, այնքան շատ է հակված մտածելու, որ կանայք խոցելի են, ինչն էլ նպաստում է սահմանային իրավիճակներում կանանց ներկայացվածության նվազմանը:

Աղյուսակ 4031 - Պատերազմի և համավարակի բացասական ազդեցությունը որոշումների կայացման մակարդակումկանանց ներկայացվածության վրա ըստ տարիքային խմբերի(բնակիչներ)

Իրավիճակներ	18-25	26-37	38-50	51-62	63+
Պատերազմը	7%	5%	2%	3%	2%
Համավարակը	0%	1%	1%	1%	1%
Երկուսնէլ	33%	35%	54%	61%	63%
Չենունեցելազդեցություն	58%	53%	36%	28%	29%
Դժվար. է պատասխ.	1%	7%	6%	7%	6%
Հրաժ. է պատասխ.	0%	0%	0%	0%	0.3%
Ընդամենը	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**

Այսպիսով, պատերազմին ու համավարակին առավել պատրաստված են դիմակայել ավագանու կին անդամները, ինչը, հավանաբար, պայմանավորված է եղել արդեն իսկ ունեցած փորձով և գիտելիքներով: Հետևաբար, դրանք քիչ ազդեցություն են ունեցել իրենց պարտականությունների կատարման վրա: Սակայն, իրականում այդ գործոնները ազդել են որոշումների կայացման մակարդակում կանանց ներկայացվածության վրա: Պատճառների թվում կարելի է նշել, որ այն իրավիճակներում, երբ հատկապես խոսքը վերաբերում է ռազմական գործողությունների կամ ճգնաժամային կառավարմանը թյուր՝ կարծրատիպային պատկերացումները սկսում են գերիշխել: Այդ պատկերացումների վերավական և կարծրատիպային լինելը թաստում են նաև ԾԹԲ-ների և ԾԾ-ների պատասխանները, ըստ որոնց նրանք շարունակում եմ վստահել կանանց գիտելիքներին, կամքին և նախաձեռնողականությանը՝ ավելի քիչ մտածելով, որ պատերազմը և համավարակը կարող են ունենալ որևէ ազդեցություն նրանց գործունեության արդյունավետության վրա:

4 ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

4.1 ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Արդյո՞ք քաղաքային խոշոր համայնքներում և ԽՀ-ներում համամասնական ընտրակարգով ընտրություններին անցնելը հնարավորություն կստեղծի գենդերային քվոտայի կիրառման համար:Որո՞նք կլինեն այն մարտահրավերները, որոնք անհրաժեշտ կլինի հաղթահարել, և որոնք կլինեն հիմնական ձեռքբերումներն ու խոչընդոտները:

Այս և մի շարք այլ հարցեր քննարկվել են որակաան հետազոտությյան մասնակից *փորձագետների խմբի, ՏԻՄ կանանց, լրագրողների* հետ:

Համամասնական ցուցակներով ՏԻՄ ընտրություններում կանանց մասնակցության վերաբերյալ փորձագետների կարծիքները տարբերվում են դրականից մինչև բացասական: Որպես դրական հարցվողները նշել են այն բացառիկ հնարավորությունը, որը կանանց ընձեռում է համամասնական սկզբունքով ընտրությունների համար կուսակցական ցուցակներում նախատեսված մեկ սեռի մասնակցության առավել տոկոսի քվոտան, որն իր հերթին ստեղծում է՝ ինչպես ԱԺ–ում, այնպես էլ ՏԻՄ համակարգում կանանց քաղաքական մասնակցության աճի հնարավորություն:

Այսինքն, եթե առաջ ՏԻՄ-երը ձևավորվում էին հիմնականում անձնական, բարեկամական կապերի հիման վրա, ապա այս փոփոխության արդյունքում «***քաղաքական առողջ մրցակցության հնարավորություն կստեղծվի և կբարձրանա պատասխանատվությունը համայնքի նկատմամբ»:*** Մյուս կողմից, այս համակարգը կաջակցի այն կանանց, որոնք կարող են դրական փոփոխություն բերել, բայց իրենց մեջ դեռևս չեն զգում առաջադրվելու, ներկայանալու, ապացուցելու և միայնակ պայքարելու ուժը: Այս տեսակետից կուսակցական մասնակցությունը շատ կարևոր է, որովհետև «***կուսակցությունն այն ինստիտուտն է, որտեղ որ կինը կարող է կայանալ և որտեղ կինը կարող է առաջադիմություն ունենա»լ***, և որտեղ պետք է լինեն մեխանիզմներ՝ կանանց առաջադիմությունն ապահովելու համար: Այն որ քվոտայի գաղափարը կարող է բերել դրական փոփոխությունների՝ վկայում է միջազգային փորձը՝ ի թիվս Շվեդիայի, որտեղ այսօր խորհրդարանում գործում է սեռային հավասար 50/50 ներկայացվածություն: Ընդ դրում, այսօր այդ երկրում արդեն իսկ չի գործում քվոտայի գաղափարը, բայց այս հավասարությանը հասել են հենց քվոտայի շնորհիվ:

Ընտրական օրենսգրքի այս փոփոխությունը ըստ հարցվածների կարող է բերել նաև այլ իրավիճակների, երբ կուսակցության դրական կամ բացասական համբավը կարող է ընդհանուր առմամբ ազդել կանանց ներկայացվածության վրա. ***«կնոջը կաշկանդող կարող է լինել կուսակցության ցուցակով հանդես գալը, քանի որ դրա հիմքում կա ավելի մեծ վարկաբեկման վտանգ, քան՝ անկուսակցական սկզբունքով հանդես գալը»:*** Այս առումով փորձագետները ՏԻՄ կանանց երկու խմբի է բաժանում՝ կանայք, որոնք համայնքում ունեն հեղինակություն և առաջ են գնում իրենց աշխատանքի շնորհիվ, և կանայք, որոնք ՏԻՄ-ում են, քանի որ հեշտ կառավարելի են և համայնքի ղեկավարի շրջապատից են:Սակայն, երկրորդ խմբի կանայք արդեն իսկհամեմատած 2019 թվականի պակասել են իրենց տեղը զիճելով հեղինակություն վայելով կանանց: Ուստի հիմա կուսակցություններն պետք է առավել հետաքրքրված լինեն համայնքում հեղինակություն վայելող կանան գտնելու և կուսակցական ցուցակներում ընդգրկելու համար:

Օրենսդրական դաշտում իրականացվող այս փոփոխությունները, որոնք միտված են կանանց հավուր պատշաճի ներկայացված լինելուն, պետք է զուգահեռվեն այլ աշխատանքների հետ: Հարցվողները կարևորել են նման գործունեության իրականացումը քաղաքական դաշտում, յուրաքանչյուր քաղաքական ուժի շրջանակներում. ***«Այդ նպատակին հասնելու համար միջազգային կազմակերպությունները և ոչ միայն, պետք է աջակցեն, որպեսզի կուսակցությունները ևս ինչ-որ առումով մրցակցության մեջ մտնեն»***:

Եզրահանգում. ՀՀ ընտրական օրենսգրքում գենդերային քվոտայի ամրագրումը՝ ՏԻՄ համամասնական ընտրություններում կանանց ու տղամարդկանց ներկայացվածությունը տեղական իշխանությունում հավասարակշռելու նպատակով փորձագիտական շրջանակներում դրական է գնահատվում:

Օրենսդրական նախաձեռնությունների շարքում հաջորդ առաջարկը վերաբերվում է համայնքային բյուջեների մշակման գործընթացում գենդերային բյուջետավարման մեխանիզմների ներդրմանը. «**մեխանիզմի ներդրումը, միանշանակորեն, հանգեցնելու է դրական տեղաշարժերի, քաղաքացիների կարիքներին համապատասխան բյուջեի ձևավորմանը**»: Փաստորեն կարևորելով գենդերային բյուջետավարման գործընթացները հարցվողները այնումենայնիվ մտավախություն են հայտնել համայնքների այս գործին անպատրաստ լինելուն. ***«կարող ենք բախվել պրոֆեսիոնալիզմի պակասի, գենդերային բյուջետավարման գործիքների չիմացության, ինչը կարող է հանգեցնել նրան, որ մեխանիզմը չաշխատի»***: Տարիներ շարունակ կանայք դուրս են մնացել համայնքային բյուջեների կազմման գործընթացից:***«Անհրաժեշտություն կա աշխատանքներ, դասընթացներ իրականացնել համայնքի զեկավարության և ավագանու ինչպես կին, այնպես էլ տղամարդ անդամների հետ, որպեսզի վերջիններս խորքային գիտելիքներ ունենան մեխանիզմի վերաբերյալ»***: Յուրաքանչյուր համայնքի համար պետք է իրականացնել գենդերային վերլուծություն, գենդերային գնահատում:

Շատ կարևոր էր այս աշխատանքը սկսել հենց համայնքային մակարդակից, քանի որ համայնքները պատրաստում և տրամադրում են իրենց բյուջեները համապատասխան վերադաս մարզպետարանին, մարզպետարանը՝ համապատասխան նախարարությանը, նախարարությունը կառավարություն դրանով իսկ ձևավորելով Հայաստանի պետական բյուջեն: Այսինքն, այդ մեխանիզմը սկսվում է հենց համայնքից, մի օղակից, որն ամենամոտն է կանգնած բնակչին, քաղաքացուն, հետևաբար առավել կարևոր է դառնում համայնքային մակարդակում այս աշխատանքը: Եվ դա այն վայրն է, որտեղ որ անհրաժեշտ է գենդերատարբերակված մոտեցում ցուցաբերել և կատարել գենդերային վերլուծություն այն իրավիճակին, որ կա համայնքում՝ ոչ միայն նկատի առնելով վիճակագրական տվյալները, այլ հատուկ կարիքները, որոնք որ ունեն կանայք և տղամարդիկ, և պատրաստել համայնքի բյուջեն՝ ելնելով այս կամ այն կարիքներից:

«ՏԻՄ անդամներին, համայնքի բնակիչներին շատ կարևոր է բացատրել, որ գենդերային բյուջեն դա առանձին բյուջե չէ կանանց համար և անգամ առանձին տողեր չեն կանանց համար: Այլ սա կշռված մոտեցում է և յուրաքանչյուր պլանավորված գործողության կարևորությունն է և՛ կանանց, և՛ տղամարդկանց համար, որպեսզի չլինի ո՛չ խտրական մոտեցում և ո՛չ էլ բացահայտ, ոչ արդյունավետ գումարների ծախսում»:

Եզրահանգում. Կարող ենք արձանագրել, որ գենդերային բյուջետավարման մեխանիզմների ներդրման արդյունքները դեռ չեն հասել իրենց գագաթնակետին, սակայն դրանք արդեն կոտրել են այն սառույցը, այն զրոյական պատկերացումը, որը եղել է մինչ այդ:

4.2 ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆԸ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կանանց քաղաքական մասնակցության բարձրացման և գենդերային կարծրատիպերի հաղթահարման միջոցառումների շարքում կարևոր տեղ են զբաղեցնում կանանց հաջողության պատմությունների ներկայացումը, իրազեկման արշավները և տեղական մակարդակում կանանց քաղաքական մասնակցության մշտադիտարկումը:

Կանանց հաջողությունների պատմությունները ներկայացնելը նպատակային և կարևոր է երկու տեսանկյունից՝ ոգեշնչող են երիտասարդների համար, մյուս կողմից***«այն կանայք, ում մասին, որ ներկայացվում են պատմությունները, իրանց զգում են արժևորված և գնահատված,քանի որ կարծես դառնում են հանրային դեմք»***: Այդ կանայք դուրս են գալիս համայնքի սահմաններից ու հայտնվում են հանրապետական հարթակում: Նման պատմությունները պետք է շատ լինեն ու կրեն մշտական բնույթ: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի որակական փոփոխության հետ մեկտեղ ունենալ քանակական փոփոխություն:

Կանանց հաջողության պատմությունների մեջ առավել խոսուն է, երբ ներկայացվում է միջին տարիքի կնոջ պատմություն: Քանի որ այդ տարիքում է կինը արդեն կարողունում է գտնել ներդաշնակություն քաղաքական ակտիվությանը, տանից դուրս զբաղվածության և ընտանեկան պարտականությունների հետ, օրինակ՝ երեխաների խնամքի: Չնայած, համաձայն փորձագետներից մեկի***«գենդերային հավասարությանը վերաբերող միջազգային փաստաթղթերը նշում են, որ կնոջ համար պետք է***

ստեղծենընտանեկան պարտականությունների և հասարակական ակտիվության համադրման հնարավորություններ»:

Կանանց հաջողության պատմությունների, իրազեկման արշավների արդյունավետության մասին լիարժեք խոսելու համար դեռ շուտ է: Այն առավել նկատելի կլինի առաջիկա ՏԻՄ ընտրություններից հետո: Սակայն փոփոխության որոշ նշույլներն արդեն ակնհայտ են: Ըստ փորձագետների՝ ծրագրի շահառուներից մեկն արդեն ավագանու անդամ է, մյուսն առաջադրվել է համամասնական ցուցակով վերջին ընտրությունների ժամանակ (չնայած այս պահին խորհրդարանում չէ): Ծրագրի շահառուների մի մասը մինչ օրս կապ է պահում (այս պահին նախկին) խորհրդարանական կանանց հետ, ներկայացնում տարբեր նախաձեռնություններ, հետևում օրենսդրական բարեփոխումներին, հնչեցված նախաձեռնություններին և արձագանքում դրանց:

Որևէ կնոջ հաջողված լավագույն փորձը գրավիչ է և կարող է օգնել կարծրատիպերի հաղթահարման գործում :***«Մեկ կնոջ հաջողված պատմության ներկայացումը կարող է ավելի շատ բան փոխել, քան երկարատև դասընթացների անցկացումը»*:**

Մյուս կողմից, ակնհայտ ազդեցություն է թողնում կանանց քաղաքական մասնակցության մշտադիտարկումը և դրանց վերաբերվող թվերի ներկայացումը: Այն նպաստում է, որպեսզի ոչ միայն կանայք, այլև համայնքի բնակիչները, տեղեկանալով իրենց համայնքի ՏԻՄ-ում կանանց թերներգրավվածության մասին՝ քայլեր ձեռնարկեն դրության փոփոխման ուղղությամբ:

ՏԻՄ-երում կանանց քաղաքական մասնակցության մշտադիտարկումը թույլ կտա ոչ միայն բարձրացնել կանանց ներգրավվածության աստիճանը, այլև վեր հանել այն բոլոր խնդիրները և խոչընդոտները, որոնք հիմք են հանդիսանում կանանց թերներկայացվածության համար: Մշտադիտարկումը պետք է իրականացնել ոչ միայն ՏԻՄ-երում, այլև մյուս օղակներում՝ համեմատությունն առավել համապարփակ իրականացնելու համար: Օրինակ, ***«շատ ցցուն է Երևանի ավագանու օրինակը, որտեղ կանայք կազմում են 32%: Մինչդեռ վարչական ղեկավարների, համայնքի ղեկավարի տեղակալների, վարչությունների ղեկավարների կազմում կանանց ներգրավվածությունը շատ ցածր է:»***

Եթե այսօր չենքկարող խոսել կանանց քաղաքական մասնակցության բարձրացմանը և գենդերային կարծրատիպերի հաղթահարմանն ուղղված միջոցառումների արդյունքում տեղի ունեցած քանակական փոփոխության մասին, ապա այդ միջոցառումները հսկայական դեր են խաղացել կարծրատիպերի հաղթահարման և կանանց շրջանում քաղաքական նախաձեռնության առաջացման գործում:

Ծրագրի շրջանակ իրականացված հաջորդ գործողությունը, որը վերաբերվում է ՏԻՄ օրենքում և կուսակցությունների մասին օրենքում փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններին, որոնք են արվել e-Draft համակարգում, այսօր արդեն գրանցել են իրենց արդյունքը՝ ի դեմս ՏԻՄ համամասնական ընտրական օրենսգրքի, որը նպաստել է կանանց մասնակցության ավելացման:

Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողովի անդամների, օրենքի նախագծի հեղինակների հետ քննարկումները փորձագետն անվանում է ***«օրենսդրական փոփոխությունների լոբբինգ, որն ավարտվեց հաջողությամբ»:***Համապատասխան հանձնաժողովի անդամներին և օրենքի նախագծի համահեղինակներին ներկայացվել ենվերլուծություններ, ՏԻՄ-երում կանանցներկայացվածության դինամիկան՝ սկսած 1995 թվականից, մատնանշվել են բոլոր խոչընդոտները, որոնք նկատելի են դարձել հետազոտությունների արդյունքում: Այսինքն՝ լոբբինգը կատարվել է դասական կերպով, որը հիմնված է եղել կոնկրետ հետազոտությունների, կոնկրետ վիճակագրական տվյալների, փորձագիտական գնահատականների, միջազգային փորձի և այլնի հիման վրա: Արդյունքում՝ մի շարք բնակավայրերում արդեն այս տարի ընտրություններն կանցնեն համամասնական սկզբունքով, և կարող է արդեն գործել կուսակցությունների համար նախատեսված քվոտան:

4.3 ՏԻՄ-ԵՐՈՒՄ ԿԱՆԱՆՑ ԱՋԱԿՑՄԱՆ, ՃԱՆԱՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համացանցն այսօր կարևորագույն տեղ է զբաղեցնում բոլորիս կյանքում ոչ միայն որպես հաղորդակցման, այլև որպես տեղեկատվության առաջնային միջոց: Ծրագրի շրջանակներում համայնքներում և այլ հանրային վայրերում կազմակերպված միջոցառումներին զուգահեռ՝ իրականացվել են նյութերի շրջանառում համացանցում: Այդ թվում՝ ՏԻՄ ընտրություններին մասնակցող կանանց տեսանելիության բարձրացում՝ նրանց մասին նյութերի պատրաստման, WomenNet.am կայքում հրապարակման, ինչպես նաև ՀԱՎԱՍԱՐ-ի և Օքսեջենի ֆեյսբուքյան էջերում տարածման միջոցով, ինչպես նաև ՏԻՄ-երում ներկայացված կանանց մասին հաջողված պատմությունների պատրաստում և տարածում, այդ թվում՝ մուլտիմեդիա ֆորմատով: Իսկ որքանո՞վ են այդ գործողություններն արդյունավետ եղել, և ի՞նչ ազդեցություն են ունեցել շահառուների շրջանում:

Ի տարբերություն Ծրագրի մի շարք այլ միջոցառումների, որոնց արդյունքները տեսանելի կլինեն միայն ընտրություններից հետո, կայքերի միջոցով տեղեկատվության տարածումն արդեն իսկ ունեցել է իր շոշափելի արդյունքները: ՏԻՄ ընտրություններին մասնակցող կանանց մասին ներկայացվող նյութերն այնքան ոգևորող են եղել, որ մի շարք կանայք արդեն իսկ բարձրաձայնել են, որ ոգևորվելով կայքում առկա նյութերով՝ ավագանու ընտրությունների ժամանակ ցանկանում են առաջադրվել:

Տեղեկատվության առումով կայքը հրաշալի շտեմարան է միջազգային, և՛ ազգային, և՛ վիճակագրական նյութերի առկայության տեսակետից: Համաձայն փորձագետի՝ ***«կան բազմաթիվ ՀԿ-ներ, որոնք այս ոլորտում իրենց հաջողություններով պարտավոր են WomenNet. am կայքին , որովհետև այնտեղ զետեղված նյութերը և թարմացվող տեղեկատվությանը երբևէ հնարավոր չէ գերազանցել»***:

Կայքերում առկա տեղեկատվությունը ոչ միայն նպաստում է կանանց՝ քաղաքականության մեջ ներգրավվելուն, այլև այն օգտագործում են արդեն իսկ քաղաքականության մեջ իրենց հստակ տեղն ունեցող կանայք՝ որպես տեղեկատվության աղբյուր:

Մյուս կողմից, այս աշխատանքը շատ կարևոր աջակցություն է նաև ՏԻՄ թեկնածուներին, աջակցություն հենց տեսանելիության առումով՝***«հատկապես ԽՀ-ներում, մեծ համայնքներում, ունենան հարթակ, որտեղ որ կարողանան իրենց տեսակետները, դիրքորոշումները և ծրագրերը հնչեցնել և փոխանցել»:***

Կայքի կիրառելիությունն ակնհայտ էր հատկապես համավարակի պայմաններում, երբ ՏԻՄ ընտրությունները հետաձգվեցին, և առաջնային դարձավ ներկայացնելու այս պահին ՏԻՄ-ում ներգրավված կանանց հաջողության պատմությունները՝մուլտիմեդիա ֆորմատով: Ներկայացնել և տեսանելի դարձնել արդեն իսկ գործող ավագանու կին անդամների և համայնքի կին ղեկավարների գործունեությունը՝ ինչպե՞ս են իրենք պայքարում համավարակի դեմ և պատերազմի ժամանակ. ***«միջազգային փորձը ցույց է տալիս, որ արտակարգ իրավիճակներում կանանց առաջնորդական հատկանիշներն ավելի լավ են երևում, քան ցանկացած այլ իրավիճակներում»:***Եվ ՏԻՄ կանանց պատմությունները ցույց տվեցին, որ շատ կանայք եղել են իրենց համայնքներում, ավագանի լինելով՝ համավարակի պայմաններում եղել են առաջնագծում, փորձել են ինչ-որ միջոցառումներ կազմակերպել, մարդկանց գիտակցությունը բարձրացնելու: Այս գործողությունների արդյունքում բարձրացել է նաև ՏԻՄ կանանց տեսանելիությունը և հեղինակությունը:

4.4 ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախաձեռնությունների հաջորդ տեսակը, որոնք ուղղված են եղել կանանց քաղաքական ակտիվության և ներգրավվածության բարձրացմանը, ներառում են «Կանայք հանուն համայնքների զարգացման» խորագրով TEDxMoskovyanSt կոնֆերանսի անցկացումը և ավագանիների բաց ֆորումը, ինչպես նաև մարզերում անցկացված հանդիպումները:

Դժվար կլինի գնահատել արդյոք ծրագրի ճիշտ և նպատակային կազմակերպելն է եղել արդյունքը, թե նաև այն հանգամանքը, որ TEDxMoskovyanSt-ի շրջանակներում ելույթ են ունեցել արդեն իսկ քաղաքականության մեջ աչքի ընկնող կանայք, ինչևէ, կոնֆերանսի մասին արձագանքներ արդեն իսկ եղել

են:TEDxMoskovyanSt-ի ելույթներից հետո մարզեր կատարած այցելությունների ժամանակ բնակիչները նշել են, որ տպավորված են ելույթներից և հիշում են տվյալ մասնակցիներկայացրած պատմությունը:

«Կանայք հանուն համայնքների զարգացման» ավագանիների բաց ֆորումի շրջանակում բոլոր մարզերից ավագանիների ամենաակտիվ կանանց ներկայությունը մի սեղանի շուրջ՝ արդեն իսկ մեծ ձեռքբերում է՝ և՛ գիտելիքի, և՛ փորձի, և՛ ապագա անելիքների քննարկման տեսանկյուններից: Միևնույն ժամանակ, քանի որ ֆորումին ներկա են եղել նաև Ազգային Ժողովի (այսուհետ՝ ԱԺ) պատգամավորներ և կառավարության ներկայացուցիչներ՝ ***«այն հնարավորություն է տվել ՏԻՄ կանանց առավել տեսանելի դարձնել իրենց խնդիրները և բարձրաձայնել հարցեր համապատասխան մարմինների ներկայացուցիչներին»:***

Արձանագրելով այս տեսակի միջոցառումների ունեցած դրական արդյունքները՝ նշենք, որ նման նախաձեռնություններն ու միջոցառումներն անպայման պետք է ունենան հետադարձ կապ բնակիչների հետ:***«Մշտական կապի ապահովումը բնակիչների հետ և՛ ծրագրի իրականացնողների կողմից, և՛ մասնակիցների՝ ազդեցությունը կդարձնի առավել ուժեղ, երկարատև և արդյունավետ»:***

4.5 ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎՆԵՐ

Քարոզարշավների ընթացքում ամենից տպավորիչ և լայն արձագանք թողած միջոցառումներից մեկը «20-րդ դարի ականավոր հայ կանայք. ճանաչիր քո պատմությունը» հանրային ցուցահանդեսն է: Ցուցահանդեսից ունեցած ոգևորվածությունը բարձր է եղել հատկապես երիտասարդ աղջիկների շրջանում, որոնք, հավանաբար, զարմացել են՝ իմանալով, որ դեռ 100 տարի առաջ էին հայ կանայք բարձրաձայնում և պայքարում իրենցիրավունքների համար: Այդ տեղեկատվությունը կարող է կարևոր հիմք հանդիսանալ՝ մեր օրերում, առավել գիտա-տեխնիկական, սոցիալական, մշակութային զարգացվածության պայմաններում ավելի ճիշտ մեխանիզմներով պայքարելու կանանց իրավունքների իրագործման համար:

Փորձագետներն մի շարք կարևոր գաղափարներ են մատնանշում, ըստ որոնց՝***«անհրաժեշտ է մեր ազգաբնակչությանը ցույց տալ, որ գենդերային հավասարության հարցը կամ կանանց հավասարության հարցը ներկրված գաղափար չէ, այլ մի գաղափար է, որը 19-րդ դարի կեսերից արդեն իսկ բարձրաձայնվել է Հայաստանում և հենց հայ անվանի կանանց կողմից»***: Այսինքն, հանրությունը գոնե այս դեպքում չի մտածում, որ ծրագրի իրականացնողները փորձում են դրսից ներմուծվող արժեքներքարոզել:Շատ կարևոր է ցույց տալ, որ արդեն իսկ 19-րդ դարի կեսերից հայ մտավորական միտքը անդրադարձել է կանանց: ***«Հայ ականավոր կանանց օրինակը, իրենց պատկերացումները, իրենց գրառումները սրա վերաբերյալ այն կարևոր դրույթներն են, որոնք գալիս են աջակցելու այսօր Հայաստանում գենդերային հավասարությանն ուղղված բոլոր ջանքերին:»***

«20-րդ դարի ականավոր հայ կանայք. ճանաչիր քո պատմությունը» խորագրով ցուցահանդեսի արդյունքներից ոգևորվածությունն այնքան բարձր է, որ փորձագետներից մեկը մեղմ քամահրանքով է խոսում ***«այն եվրոպական երկրների մասին, որոնք այսօր հայ հասարակությանը քննադատում են կանանց իրավունքների ոչ այնքան բարձր աստիճան ունենալու մեջ, մինչդեռ 20-ական թվականներին մեր իրականությունում կանայք ունեցել են ընտրելու և ընտրվելու իրավունք»:***

Եթե «20-րդ դարի ականավոր հայ կանայք» միջոցառումն ավելի շատ ուղղված է գենդերային կարծրատիպերը հաղթահարելուն, ապա «ՀԱՎԱՍԱՐ-ի մարաթոնը»՝ ընտրական գործընթացների վրա ներազդելուն: Չանդրադառնալով քարոզարշավի կազմակերպման դժվարություններին, նշենք, որ արդյունավետության տեսանկյունից, «ՀԱՎԱՍԱՐ մարաթոնի» միջոցառումներով Հայաստանում նոր քաղաքական մշակույթ է բերվել. ***«հավաքել մարդկանց, հարթակ և հնարավորություն ստեղծել կին թեկնածուների համար, որպեսզի իրենք բարձրաձայնեն իրենց դիրքորոշումը համայնքի շրջանակներում, ինչպես նաև ներմուծելքաղաքական բանավեճինոր մշակույթ:»***

Մյուս կողմից, «ՀԱՎԱՍԱՐ մարաթոնի» շրջանակներում մասնակից կանայք տիրապետել են քարոզարշավի մշակույթին և հասկացել դրա կարևորությունը: Հատկապես փոքր համայնքներում, որտեղ բնակչությունը ճանաչում է մեկը մյուսին, ՏԻՄ ընտրությունների նախապատրաստական փուլերում

քարոզարշավի անցկացման անհրաժեշտություն չի լինում: Սակայն, արդեն ՀԽ-ներից հետո քարոզարշավի իրականացման անհրաժեշտությունը դառնում էկարևոր նախապայման: Հետևաբար, մարաթոնն ունեցել է իր կարևոր ներդրումն այս հարցում:

«ՀԱՎԱՍԱՐ մարաթոնի» շրջանակներում իրականացված հաջորդ միջոցառումը, որի ժամանակ կին պատգամավորներն այցելել են համայնքներ՝ խրախուսելու և ոգևորելու ՏԻՄ-երում առաջադրվելու ցանկություն ունեցող կանանց, նպաստել են կանանց ինքնավստահության բարձրացմանը: Սակայն, այդ այցելություններն ունեցել են այլ, ոչ թիրախավորված ազդեցություն ևս: Դրանք խրախուսել են նաև այն ՏԻՄ կանանց, որոնք մինչ այժմ ներկայանալու խնդիր են ունեցել իրենց փոքր համայնքում, իսկ ՀԽ-ներից հետո՝ առավել մեծ համայնքում. ***«Կին պատգամավորների այցելությունների արդյունքում մեղմվել կամ վերացել է առավել մեծ լսարանի առջև հանդես գալու կանանց կաշկանդվածությունը»:***

Ինչ վերաբերվում է ՏԻՄ-երում առաջադրված կին թեկնածուների մասին նյութեր պատրաստելուն և դրանք սոցիալական ցանցերում և տեղական մեդիաների միջոցով տարածելուն, ապա ըստ փորձագետների, ***«հատկապես բարձր արդյունավետություն էունենում, երբ տվյալ համայնքում ներկայացվում է տվյալ համայնքում բնակվող կին թեկնածուի մասին նյութ»***: Քանի որ, այն ավելի շոշափելի է դառնում, երբ խոսքը գնում է բնակիչների կողմից ճանաչված կնոջ մասին:

4.6 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԶԳԱՅՈՒՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆԸ, ՍԵՔՍԻԶՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆԸ, ՄԵԴԻԱՅԻ ԶԳԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ, ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով այն փաստը, որ մեդիան այսօր ընկալումներ ձևավորող առաջնայինօղակներից մեկն է, հույժ կարևոր է, թե որքանով է այն գենդերային առումով զգայուն: Ծրագրի հաջորդ խումբ միջոցառումներն ուղղված են եղել գենդերային զգայուն լրատվության խրախուսմանը, այդ թվում՝ «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի գենդերային ուղղորդման, մեդիայի մշտադիտարկման, համապատասխան ձեռնարկների և տեսահոլովակների ստեղծման ու տարածման: Բնականաբար, այս շարքում կարևորագույն տեղ են զբաղեցնում լրագրողների, բլոգերների հետ իրականացված դասընթացները:

Գենդերային հիմնահարցերը, կարծես թե, առավել արտահայտված են սոցիալական մեդիայում, քանի որ գոնե հեռուստատեսության պարագայում կան օրենսդրական կարգավորումներ: Հատկապես այս հարթակում խոցելի են կին քաղաքական գործիչները, որոնց հասցեին հնչեցված վիրավորանքները և բացասական կարծիքները ձևավորում են հանրային ընկալումներ: Այդ ընկալումների կրողները դառնում են հատկապես երիտասարդները, որոնքնոր են սկսում օգտվել սոցիալական հարթակներից և հանրության այն զանգվածը, որը չունի բավարար վերլուծական գիտելիքներ՝ իր սեփական կարծիքը ձևավորելու համար:

Այս հարցում մեծ ներդրում կարող է ունենալ մեդիայի մշտադիտարկումը, որը դուրս է բերում մեդիաներում գոյություն ունեցող սեքսիզմը: Այս ուղղությամբ իրականացված ծրագրերը ***«կօգնեն, նախևառաջ, հենց ոլորտի պատասխանատուներին՝ աշխատել լրատվամիջոցների հետ, աշխատել հանրության հետ, որպեսզի հասկանան, որ բռնությունը, որքան էլ, որ սերիալում է, ամեն դեպքում դա իր ազդեցությունն ունենում է հասարակության վրա»***:Մեդիայի մշտադիտարկումը կարող է լինել այն հիմնական գործիքներից մեկը, որը հատկապես հեռուստատեսային լրատվամիջոցներին կպահի զգոն վիճակում:

«Սեքսիզմի դրսևորումները հանրային տիրույթում և խոսքում. ճանաչե՛նք, խուսափե՛նք, կանխե՛նք» թեմայով դասընթացները, որոնք անցկացվել են լրագրողների և լրագրության ֆակուլտետի ուսանողների հետ, կարողացել են գիտելիքի առումով զինել վերջիններիս:

Լրագրողների ստացած գիտելիքները կարևոր են նաև այն առումով, որ շատ դեպքերում սեքսիզմի դրսևորումներն արտահայտվում են թաքնված ձևով, և պետք է տիրապետել որոշակի հմտության՝ դրանք հասկանալու համար:Դասընթացների արդյունքում ձեռք բերված հիշարժան գիտելիքներիցմյուսը խտրական և ոչ խտրական վերաբերմունքը տարբերակելն է ու տպագրվող նյութերում դրանց ուշադրության դարձնելը:

«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի գենդերային ուղղորդման վերաբերյալ փորձագետներից մակն նշում է, ***«օրենսդրական փոփոխությունը կարևոր է, բայց չի կարող լինել միակ քայլը: Անհրաժեշտ է աշխատել և՛ օրենսդրությունը վերափոխելով, և որոշում կայացնողների տեղեկատվությունը բարձրացնելով,որպեսզի տեղյակ լինեն, որ եթե օրենքում կա այսպիսի արգելք, ուրեմն դրա ներքո կա շատ լուրջ խնդիր»:*** Այսինքն, իրականացնել կարողությունների զարգացման աշխատանք որոշում կայացնողների և որոշ տեսակի կառույցների ներկայացուցիչների հետ:Դրա հետ մեկտեղ՝ պետք է իրականացվի իրազեկության բարձրացման աշխատանք բնակչության բոլոր շերտերի հետ:

Մեդիան առավել գենդերային զգայուն դարձնելու ուղղված նախաձեռնություններից՝ «Սեքսիզմի դրսևորումները հանրային տիրույթում և խոսքում» ձեռնարկի և տեսահոլովակի ստեղծումը կնպաստի խտրական խոսքից զերց մնալուն: ***համաձայն լրագրողների. «Ձեռնարկը, միակն է Հայաստանում իր ձևաչափով»:«Այն շատ ընդգրկուն է՝ որտեղ միաժամանակ ներկայացված է և՛ միջազգային փորձը, և՛ օրինակներ են բերված հայ իրականությունից, ինչն այն դարձնում է առավել հեշտ ընկալելի»:***

Չնայած իրականացված գործողությունների շրջանակը թվում է շատ հստակ է և նեղ, սակայն մեդիայի ոլորտի ներկայացուցիչների հետ անցկացվող միջոցառումները կարող են նպաստել նաև հանրային ընկալումների փոփոխությանն այն առումով, որ վերջիններս տեղեկատվության տարածողներն էր: Միայն իրենց գործընկերների և միջավայրի շրջանակներում տարածելն արդեն կարող է հանրության մի մեծ շրջանակ ներառել և ընկալումներ փոխել:

Բարձր գնահատելով գենդերային զգայուն լրատվությանն ուղղված բոլոր միջոցառումների արդյունավետությունը՝ նշենք մի քանի առաջարկներ: ***«Մեդիայում սեքսիզմի դրսևորումները նվազեցնելու կամ վերացնելու համար միայն լրագրողների հետ տարվող աշխատանքները բավարար չեն», «դրանք արտահայտվում են նաև գովազդների ժամանակ, որոնց վրա աշխատում են ոչ միայն լրագրողներ, այլև սցենարի հեղինակներ, համակարգչային մասնագետներ և այլն»:*** Այսինքն, պետք է բարձրացնել ընդհանուր իրազեկվածության մակարդակը, որպեսզի սեքսիզմի դրսևորման հաղթահարումն ավելի ճիշտ և համապարփակ իրականացվի:

Սեքսիզմի դրսևորումները հաղթահարելու համար պետք է ծրագրեր իրականացնել ամենից լայն մասսայականություն ունեցող լսարանի՝ հեռուստատեսության միջոցով, կազմակերպել, ցուցադրել հանրային քննարկումներ: Ընդ որում, ***«հանրային քննարկումները պետք է կազմակերպվեն ոչ միայն Երևանում, այլև մարզային բնակավայրերում»: « Կազմակերպվող դասընթացների ժամանակ պետք է ներգրավվել ոչ միայն լրագրողներին, որոնք սեքսիզմի դրսևորումների ամենից քիչ կրողն են, այլև, օրինակ, հումորային հաղորդումների սցենարի հեղինակներին, որոնք խնդրի հիմքում են:»*** Ինչպես նաև, դասընթացներ անցկացնել լրագրության ոլորտում սովորող ուսանողների հետ, որն ավելի մեծ լսարան կապահովվի, հատկապես, որ ուսանողների մի մասը մարզերից են և մարզերի ապագա լրագրողներ:

4.7 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՄ ԿԱՆԱՆՑՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԸՍՏ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ՏԻՄ ԿԱՆԱՆՑ

Հայաստանում տեղի ունեցած երկու իրադարձությունները՝ համավարակը և պատերազմը, փորձություն էին ողջ հանրության համար: Սակայն, ***«եթե հանրության մեծ մասըպատասխանատու է իր համար, իր ընտանիքի համար, ապա ՏԻՄ ներկայացուցիչները պատասխանատու էին ողջ համայնքի համար:»***Համավարակի ժամանակահատվածում ՏԻՄ կանայք դարձել են ավելի նախաձեռնող, իրականացրել են ամեն հնարավոր գործողությունները՝ համայնքի բնակիչներին օգնելու համար: ՏԻՄ կանայք համավարակի դեմ ուղղված միջոցառումներում ներգրավել են համայնք այլ ակտիվ կանանց՝ բուժաշխատողներ, դպրոցի տնօրեն, մանկավարժներ, որոնք լայն լսարան ունեն՝ ի դեմս աշակերտների և նրանց ծնողների:

Այդ առումով, համավարակը չի խոչընդոտել ՏԻՄ կանանց գործունեությանը: Վերջիններս սահմանային այդ իրավիճակում կարողացել են ելքեր գտնել, զինվել գիտելիքներով և հաղթահարել համայնքի բնակչության համար խոչընդոտ հանդիսացող վիրուսի դեմ: Սակայն, համավարակը խանգարել է ՏԻՄ կանանց նոր գիտելիքների և հմտությունների ձեռքբերման համար: Անգամ այս Ծրագրի շրջանակներում մասսայական միջոցառումներ չեն իրականացվել, դասընթացներն անցկացվել են օնլայն հարթակում, որն ***«արդյունավետության տեսանկյունից առավել պակաս արդյունավետ է, քան՝դեմ առ դեմ հանդիպումները:»***

4.8 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Այն որ Ծրագրի շրջանակներում շահառուների հետ իրականացված միջոցառումներն արձանագրել են արդյունավետության բարձր աստիճան՝ արդեն պարզ դարձավ: Սակայն որքանով են դրանք նպաստել շահառուների շրջանում գենդերային հավասարության վերաբերյալ ընկալումների փոփոխությանը: Այս հարցի պատասխանը ստանալու համար Ծրագրի մասնակից շահառուների 10%-ի շրջանակներում իրականացվել է հարցում: Հարցման նպատակն էր ստանալ հետևյալ հարցերի պատասխանները՝ ինչ ազդեցություն է թողել Ծրագրին ունեցած մասնակցությունն իրենց գործունեության փոփոխության վրա, որքանով են փոխվել ընկալումները գենդերային հիմնահարցերի վերաբերյալ, որքանով կկարողանան կիրառել ստացած գիտելիքները և տեղեկատվությունն իրենց գործունեության շրջանակներում, և որքան են գնահատումԾրագրի արդյունավետությունը:

Սկսելով Ծրագրի արդյունավետության գնահատումից, որն արձանագրել է 4. 82 է 5 բալային համակարգից: Նշենք, որ մասնակիցներին գնահատելու համար առաջարկվել է 5 բալային համակարգ, որտեղ 5 նշանակում է շատ արդյունավետ, իսկ 1՝ ոչ արդյունավետ: Իրենց կողմից տրված գնահատականներում մասնակիցները տվել միայն 4 և 5 գնահատականներ՝ ինչը խոսում է այս հարցում ծրագրի հաջողության մասին: Ընդ որում, այս բաժնում քննվող հարցերի շրջանակում արդյունավետությունն ունի ամենից բարձր գնահատականը:

Ի՞նչ ազդեցություն է թողել Ծրագրին ունեցած մասնակցությունը շահառուների գործունեության փոփոխության վրա: Այս հարցի պատասխանը ստանալու համար ևս կիրառվել է գնահատման 5 բալանոց սանդղակ՝ ևշահառուների գործունեության վրա Ծրագրի ունեցած ազդեցության միջին գնահատականը 4. 48 է: Պատասխանների 68%-ում տրվել է 5 գնահատականը, այսինքն, հարցվող շահառուների մեծ մասի գործունեության վրա Ծրագիրն ունեցել է դրական փոփոխություն:

Հասկանալու համար, թե որքանով են փոխվել Ծրագրի մասնակիցների ընկալումները գենդերային հիմնահարցերի վերաբերյալ, մասնակիցներին կողմից տրված միջին գնահատականը կազմում է **4. 44:** 5 գնահատականը տրվել է շահառուների 60%-ի կողմից: Միայն 1 մասնակից է նշել, որ իր ընկալումներն ընդհանրապես չեն փոխվել:

Գծապատկեր 28 - Ծրագրի շրջանակներում ստացված գիտելիքների և տեղեկատվության կիրառման հնարավորությունները



Այն որ Ծրագրի մասնակիցների ընկալումներում փոփոխություններն ակնառու են, իսկ ծրագրի արդյունավետությունը բարձր՝ պարզ է: Սակայն, կարծում ենք, որ յուրաքանչյուր Ծրագրի կարևորությունը և հաջողությունը կայանում է նաև նրանում, թե որքանով են դրա շրջանակներում ձեռք բերված գիտելիքները, փորձը և տեղեկատվությունը կիրառելի: Այս հարցը գնահատելու համար առաջարկվել է 4 չափման միավորից բաղկացած սանդղակ՝ շատ, որոշ չափով, քիչ և ընդհանրապես չեն կիրառել: **Այսպես, մասնակիցների 98%-ը որևէ չափով կիրառել է իր ձեռք բերած գիտելիքները** (**Գծապատկեր 28**): Ընդ որում, գիտելիքները կիրառվել են կամ շատ կամ որոշ չափով: Չի եղել որևէ մի մասնակից (հարցվողների շրջանում) ով որևէ ձևով չի կիրառել Ծրագրի շրջանակներում ձեռք բերած իր գիտելիքները:

5 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2020 թվականն աննախադեպ ծանր տարի էր Հայաստանի համար, երբ փոփոխության ենթարկվեցին մի շարք հասարակական պատկերացումներ և ոչ միայն կանանց քաղաքական մասնակցության այլև շատ և շատ այլ հարցերի վերաբերյալ: Այնուամենայնիվ, հետազոտության արդյունքները գալիս են ապացուցելու, որ եթե ոչ ողջ երկրում, այլ ծրագրի թիրախային համայնքներում դրականորեն են փոխվել հասարակական ընկալումները կանանց քաղաքական մասնակցության և համայնքային կյանքի վերաբերյալ, ինչն իր հերթին պետք է դիտարկվի որպես ծրագրի դրական արդյունք: